



Փ Ա Ր Ո Ս *Paros*

ISSUE 66 – JANUARY / ԹԻԻ 66 – ՅՈՒՆՈՒԱՐ 2023

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

2023

Կիր., 1 Յունուար – Հայկական աւանդութիւն է տարին սկսիլ աղօթքով եւ փառք տալով Աստուծոյ անցեալ տարուան համար, եւ բարիք խնդրելով յառաջիկայ տարուան համար: Թեմիս երեք եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ ամանորեայ պատարագ իսկ Նոր Զելանտայի մէջ նոր տարուան եւ Սուրբ Ծննդեան պատարագը տեղի ունեցաւ 15 Յունուարին (մանրամասնութիւնները կարդալ այլուր): Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Առաջնորդ Սրբազան Հայրը առաջնորդանիստ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ պատարագեց, կատարեց աւանդական Նոնօրինէք եւ յաւուր պատշաճի քարոզեց: Իր հայրական խօսքերուն մէջ Սրբազան հայրը տուաւ պատգամ, բնաբանը առնելով Ժողովողի գիրքէն՝ «Ամէն Բանի Ժաամանակ Կայ» հատուածէն.



«Այսօր 2023-ի առաջին օրն է եւ ուրախ եմ որ եկեղեցի եկած էք բազմութեամբ, աղօթքով սկսելու համար տարին եւ փառք տալու Աստուծոյ անցեալ տարուան համար, հակառակ մեր բոլոր դիմագրուած դժուարութեանց. նաեւ եկած էք աղօթելու յաջորդ տարուան համար: Ժողովողի գիրքին մէջ շատ խոր մտածուած է ժամանակի մասին, - *Ամէն ինչի ստեղծ կայ, ծնելու ժամանակ եւ մեռնելու ժամանակ, տնկելու ժամանակ եւ քաղելու ժամանակ, լալու ժամանակ եւ ծիծաղելու ժամանակ, սիրելու եւ ատելու, քանդելու եւ կառուցելու, պատերազմի եւ խաղաղութեան ժամանակ* եւայլն - : Որքան կարեւոր է գիտնալ բան մը իր ժամանակին, տեղի՛ն ընելը:

Ժամանակի հասկացողությունը մարդկությունը ինքն է որ կ'իմաստաւորէ: Մարդկությունը սահմաններու մէջ դրած է անսահմանելին, նկատի առած է չորս եղանակները, լուսնի եւ արեւի դարձուածքները: Ստեղծած է ժամի, վայրկեանի, երկվայրկեանի հասկացողությունը: Այս բոլորը մարդու ստեղծագործութեան արդիւնքն է, որպէսզի կարենայ անսահմանելին, այսինքն ժամանակը, սահմաններու մէջ դնել»: Սրբազան հայրը պատմութեան ընթացքին պատահած գործնական օրինակներով իր միտքը աւելի յստակացուց թէ ինչպէս մարդը կարողացած է ժամանակը ճիշդ ձեւով հակակշռի տակ պահել:



Շարունակելով իր իմաստալից քարոզը, Սրբազանը ըսաւ. «Մարդուս կեանքը եւ ունեցած տաղանդներն ու շնորհները Աստուծոյ նուէրներն են: Հետեւաբար այդ շնորհները օգտագործելը ո՞ր օրուան կը թողունք: Երբ կ'անդրադառնանք ժամանակին՝ ան կը սահի, եւ եթէ մեզի տրուած նուէրները չենք օգտագործած մեզի եւ մեր շրջանակին համար, ապա Աստուծոյ աչքին ժամանակը վատնած ենք:

Նոր տարին մտածելու առիթ է թէ ո՞ր կ'երթանք որպէս մարդ, որպէս համայնք եւ որպէս եկեղեցի: Նախ պէտք է գիտնալ թէ ուր ենք որպէսզի կարենանք որոշել ուր երթալ: Եթէ գիտենք թէ ուր կ'երթանք ապա պէտք է ծրագրենք թէ ինչպէս պէտք է հասնինք հոն՝ ուր նպատակ դրած ենք հասնիլ:

Թեքեան բանաստեղծը կ'ըսէ «կեանքէն ինծի ինչ մնաց: Ինչ որ տուի ուրիշին, տարօրիանակ, այդ միայն»: Այս քրիստոնէական ապրումի արտա-

յայտութիւն է: Ճիշդ է որ տալով՝ բան մը կը պակսի մեզմէ սակայն ուրիշ բան մը կ'աւելնայ, որն է հոգեկան ուրախութիւնը, բաւարարութիւնը, բան մը որ ոչ ոք կրնայ խլել մեզմէ: Սակայն այս ուրախութիւնը ապրելու համար հարկ է որ մարդ ունենայ ուրիշը երջանկացնելու վեհ գիտակցութիւն»:

Սրբազանը անդրադառնալով ուրախութեան սփռման կարեւորութեան ըսաւ. «Երէկ բոլորս տարբեր ձեւերով ուրախացանք Նոր տարին դիմաւորելով: Սա բնական է: Սակայն արդեօ՞ք մէկ վայրկեան մտածեցինք անոնց մասին, որոնք այդ տարրական, բնական ուրախութիւնը վայելելու առիթ չունին: Տօնածառ մը չունին: Սեղանին վրայ դնելու ուտելիք չունին: Մտածեցի՞նք մեր եղբայրներուն եւ քոյրերուն մասին ի Լիբանան, Սուրիա, Արցախ կամ Հայաստան կամ այլուր: Մտածեցի՞նք չունեցողին աչքերուն մէջ կաթիլ մը ուրախութեան արցունք դնելու մեր փոքր նուէրով: Քրիստոնէութեան համար տալը եւ ուրիշը ուրախացնելը ամենէն տարրական սակայն հիմնական բաներն են»:

Շարունակելով իր պատգամը, Սրբազանը անդրադարձաւ երջանկութեան իմաստին եւ ըսաւ. «Երջանկութիւնը չէ պայմանաւորուած նիւթական հարստութեամբ կամ միլիոնաւոր տոլարներով: Կեանքի մէջ կարեւոր բաները ընդհանրապէս ձրի են: Բարեւ մը տալու, ժպիտ մը փոխանցելու, յարգելու, սիրելու համար գումարներու պէտք չունինք, սակայն անոնցմով կ'ուրախացնենք դիմացինը, հետեւաբար եւ մենք զմեզ»:

«Նոր տարի է, մեր յոյսը Աստուծոյ վրայ է, Իրմէ կը խնդրենք որ մեզի տայ իմաստութիւն ժամանակը լաւ եւ ճիշդ օգտագործելու, խաղաղութեան համար օգտագործելու: Ե՞րբ ի վերջոյ պիտի անդրադառնանք որ խաղաղութիւնը աւելի լաւ է քան պատերազմը»: Ապա Սրբազան հայրը օրինակներ տուաւ թէ ինչպէ՞ս Ա. պատերազմի աւարտին աշխարհի ղեկավարութիւնը որոշեց չպատերազմիլ, սակայն նոյն սերունդը քսան տարի ետք դարձեալ պատերազմի մտաւ եւ աւելի՛ քանդեց, աւելի՛ սպաննեց: Աւարտին՝ կազմակերպութիւններ ստեղծուեցան ՄԱԿ եւ այլք որ հսկեն խաղաղութեան վրայ, բայց այսօր՝ Ուքրանական պատերազմ, որ կրնայ երրորդ աշխարհամարտի առաջնորդել...»:

«Մարդկությունը կ'ուզե՞ արթննալ: Եթէ այո, ատոր համար Քրիստոսի սերը պէտք է ունենայ, պէտք է գիտակցի որ ինք լոյսի զաւակ է, ինք խաւարը լուսաւորողն է եւ յուսատուն է լոյսի յարատեւման համար: 2000 տարիէ ի վեր մենք լոյսի մարտիկներն ենք, կը հաւատանք Աստուծոյ, Լոյսի յաղթանակին, որուն կարելի է հասնիլ միասնական ճիգով» խորհրդածեց Սրբազանը:

«Ձեր բոլորին առողջութիւն կը մաղթեմ: Անձնական ձեր հոգիներուն խաղաղութիւն կը մաղթեմ, խաղաղութիւնը դուք պէտք է ունենաք որ կարենաք անկէ բաժին հանել ուրիշին: Բաժին հանեցէք անկէ մեր եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք ոչ նախանձելի օրեր կ'ապրին Սուրիոյ, Լիբանանի թէ Արցախի մէջ: Բաժին հանեցէք բոլոր անոնց, որոնք պէտք ունին աշխարհի բոլոր անկիւններուն մէջ: Եկէք մեր միասնական ջանքերը Աստուծոյ սեղանին առջեւ դնենք հասնելու համար մեր ընդհանրական նպատակներուն, քաջութիւնը ունենանք միասին աշխատելու, չընենք անցեալի սխալները: Թող նոր տարին բարիք սերմանէ բոլորիս վրայ» եզրակացուց Սրբազան հայրը:

Բշ., 2 Յունուար – Համայնքային Մարմիններու երկրորդ ժողովը տեղի ունեցաւ նախագահութեամբ Սրբազան հօր եւ մասնակցութեամբ համայնքային կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն: Արցախի ի նպաստ աշխատանքի գործնական որոշումներ առնուեցան, կազմուեցաւ ենթայանձնախումբ արագացնելու համար աշխատանքները:

Եշ., 5 Յունուար – Ճրագալոյցի Պատարագ մատուցուեցաւ Աւստրալիոյ երեք եկեղեցիներուն մէջ ի Սիտնի եւ ի Մելպուրն: Սրբազան Հայրը պատարագեց Ուէնթուրըթվիլի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, որուն սպասարկեց Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան: Մանրամասնութիւնները տեսնել «Լուրեր Ծուխերէն» բաժինին մէջ: Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան իսկ Մելպուրնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ՝ Արժ. Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան:



Եշ., 5 Յունուար – Ընդառաջելով Արմենիա Մետիայի գործադիր տնօրէնուհի Տիկ. Նորա Մեւակեանի առաջարկին, Սրբազան հայրը, այլ համայնքային ղեկավարներու կողքին, Սուրբ Ծննդեան իր պատգամը ուղղեց Աւստրալիայի համայնքին, Արմենիա Չայնի Խթման Գիշերուան յայտագրէն:

Տասնեակ տարիներէ ի վեր Արմենիա Չայնը 6 ժամուան յատուկ յայտագիր մը կը հեռասփռէ (երեկոյեան ժամը 7-էն 6 Յունուարի առաւօտեան ժամը 1): Այս տարի եւս տեղի ունեցաւ նոյնը, որուն ընթացքին Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ կատարեցին իրենց բարեմաղթանքը: Տիկին Մեւակեան, իր ընկերակից հաղորդավարներուն օժանդակութեամբ, լաւագոյնս վարեց յայտագիրը, որը աւարտեցաւ ՀՕՄ-ի երգեցիկ խումբի ռատիօժամ ժամանումով, աւետելու համար Սուրբ Ծնունդը «Խորհուրդ Մեծ»-ով, «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան»-ով եւ այլ հոգեւոր եւ հայկական երգերով: ՀՕՄ-ի անդամուհիները խթման գիշերը կ'այցելեն Հայ ընտանիքներու տուններ եւ կ'աւետեն Քրիստոսի Սուրբ Ծնունդը, սովորութիւն մը, որ դարերու ժառանգութիւն է փոխանցուած սերունդէ սերունդ:

Իր լաւատես պատգամին մէջ Սրբազան հայրը ըսաւ.

«Միրելի Աւստրալիոյ Հայ համայնք, Ուրախ եմ որ այս առիթը կ'ընձեռուի ինձի Արմենիա Չայնի միջոցաւ ձեզի հասնելու: Իմ բարեմաղթանքս է մեր համայնքին, որ նախ իւրաքանչիւրիդ Աստուած պարզեւէ առողջութիւն, երջանկութիւն եւ մեր համայնքին՝ միասնականութիւն:

Բաւական դժուար տարի մը անցուցինք մանաւանդ Հայաստանի, Արցախի եւ Միջին Արեւելքի մէջ: Իմ մաղթանքս է որ միահամուռ ըլլանք եւ բռնցքուինք: Գիտնանք, որ մեր հարցերը ՄԵՆԲ պէտք է լուծենք: Գիտնանք որ ամէն անգամ որ մեր հարցերու լուծման համար ուրիշին պիտի դիմենք, այդ «ուրիշը» նախ իր շահերուն մասին պիտի մտածէ: Հայ ժողովուրդը, մասնաւորաբար Հայաստանի եւ Արցախի մէջ, իրենք պիտի որոշեն որ ինչ են իրենց շահերը եւ ինչպէս կրնան այդ շահերը ձեռք բերել:

Մեզի համար այժմ ամենէն կարեւորը Հայաստանի եւ Արցախի անկախութեանց շարունակականութիւնն է: Այս շարունակականութիւնը պէտք է ըլլայ կարմիր գիծը, որովհետեւ եթէ մենք այսօր կորսնցնենք Արցախը, հաւատացէ՛ք, վաղը Միւնիքը պիտի իյնայ եւ անկէ ետք Հայաստանի գոյութիւնը հարցականի տակ պիտի դրուի: Մենք իմաստուն ղեկավարներու պէտք ունինք, որոնք պիտի կարենան տեսնել դժուարութիւնները եւ պիտի կարողանան որոշել ինչ քայլ առնել ապահովելու համար իրենց երկիրներու անկախութիւնները»: Սրբազան հայրը պատմութենէն բերաւ երկու օրինակ, թէ ինչպիսի դիւանագիտական իմաստութեամբ կարելի եղաւ անկախութիւն եւ ապահովութիւն ապահովել եւ ըսաւ. «Թէոդորոս Ռշտունին Հայոց Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով թողուց Բիզանդիոնը եւ Իսլամ Արաբ Մուսուլիայի հետ համաձայնութիւն կնքեց որպէսզի ապահովէ ներքին անկախութիւնը: Եւ ատոր շնորհիւ Հայաստան կարողացաւ 100 տարի իր անկախութիւնը եւ ապահովութիւնը վայելել: Միւս օրինակը՝ Գիլիկիայէն. Հէթում թագաւոր իմաստութիւնը ունեցաւ երթալու Մոնկոլիա, դաշինք կնքելու համար: Մոնկոլները հեթանոս էին: Այդ դաշինքը կարեւոր դեր ունեցաւ, որուն շնորհիւ Գիլիկիան թագաւորութիւնը կարողացաւ 100 տարի շարունակականութիւն ապահովել: Մենք պէտք է գիտնանք մեր պայմաններուն մէջ ընտրել այն ուժերը, որոնք մեզ նկատի ունին, սակայն անոնք մեզ նկատի կ'առնեն երբ մենք, առաջին հերթին, միաւոր ուժ մը կը ներկայացնենք: Այդ հաշիւով է որ ըլլայ Մուսուլիան, ըլլան Մոնկոլները արժանապատիւ եւ երկու պետութեանց արժանաւայելի դաշինքներ կնքեցին: Այսօրուան Հայաստանի մէջ մենք պէտք է այսպիսի դիւանագետ մտնեցում ունենանք, ո՛չ միայն այսօրուան պայքարը շարունակելու համար, այլ պէտք է կարենանք տեսնել հեռուն, տեսնել թէ ովքե՛ր կրնան ըլլալ այն ուժերը, որոնք Հայաստանի անկախութեան սատար կը հանդիսանան: Ա՛յս է հիմնականը: Սփիւռքի մէջ մեր գոյութիւնը ժամանակաւոր է, բոլորս ալ գիտենք: Այս ժամանակաւոր գոյութիւնը հարկ է այնպէս օգտագործել, որ եւ Հայաստանը եւ Արցախը շարունակեն իրենց անկախութիւնը: Այս պիտի ըլլայ մեր վերջին ներդրումը Հայ ժողովուրդի յաւիտենական ընթացքին մէջ: Ես դրական մտնեցում ունիմ, հակառակ մեր երկու անկախ երկիրներուն վրայ դրուած ճնշումներուն: Հայաստանը իր անկախութիւնը պիտի կարենայ պահել եւ դուրսի ուժեր սատար պիտի կանգնին անոր եւ Հայաստան ու Արցախ պիտի գտնեն իրենց ապահով ապագան: Միջազգային գետնի վրայ Արցախի հարցը արդէն ՄԱԿի եւ Եւրոպական Միութեան քննութեան առարկայ է: Կը հաւատամ որ Արցախը պիտի կարենայ իր գոյութիւնը պահել: Դրական յոյսերով կ'ապաւինիմ Աստուծոյ ինչպէս նաեւ, եւ մանաւանդ, կ'ապաւինիմ Հայ ժողովուրդի իմաստութեան: Ան ուժ պիտի գտնէ միասնանալու, բռնցքաւորուելու, որպէսզի մենք կարենանք միասին մեր դատերը յառաջ տանիլ:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ»:

Նոր., 6 Յունուար–Հակառակ աննպաստ կլիմային, խուռներամ բազմութիւն մը փութացած էր Չացուուտի Սուրբ Յարութիւն Առաջնորդանիստ եկեղեցին, ուր Սրբազան Հայրը՝ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան պատարագեց եւ քարոզեց: Ար սպասարկեց Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան:

Նոր., 6 Յունուար–Հակառակ աննպաստ կլիմային, խուռներամ բազմութիւն մը փութացած էր Չացուուտի Սուրբ Յարութիւն Առաջնորդանիստ եկեղեցին, ուր Սրբազան Հայրը՝ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան պատարագեց եւ քարոզեց: Ար սպասարկեց Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան:

Յուարտ Պատարագի, Սրբազան հայրը կատարեց ջրօրհնէքի արարողութիւնը: Ջրօրհնէքի այս տարուան կնքահայրն էր Պրն Գեորգ Խարաճեան, որդին հանգուցեալ Բարեշնորհ Յովհաննէս Աւագ Սարկաւագ Խարաճեանի: Ի դէպ, Խարաճեան ընտանիքի անդամները ջրօրհնէքի յատուկ կաթսայ մը նուիրեցին եկեղեցոյ, ի յիշատակ իրենց ամուսնոյն եւ հօր՝ Յովհաննէս Սարկաւագին: Սրբազանը կատարեց կաթսայի օրհնութիւնը, օրհնեց Խարաճեան ընտանիքը եւ պանծացուց յիշատակը հանգուցեալ աւագ սարկաւագ Յովհաննէս Խարաճեանին: Յուարտ Սուրբ եւ անմահ պատարագին, Սրբազան հայրը թափօրով փոխադրուեցաւ կողքի Էտկարեան սրահը, ուր տեղի ունեցաւ տնօրհնէք, որմէ ետք օրհնուած ջուր, աղ եւ հաց հրամցուեցաւ ներկայ հաւատացեալներուն:



Սրբազան հայրը տուաւ իր Սուրբ Ծննդեան պատգամը բնաբան ունենալով «*Եւ ահա կոչսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, որ պիտի կոչուի Էմանուէլ, այսինքն Աստուած մեզի հետ է*»:

Սրբազանը անդրադարձաւ որ աւելի քան 500 տարի առաջ Եսայի եւ այլ մարգարէներ գուշակած էին որ Աստուծոյ ներկայութիւնը պիտի շեշտուէր մարդոց հոգիներէն ներս: Եւ ախոռին մէջ պիտի համեստօրէն ծնէր Յիսուս: Եւ այս մանուկը պիտի բերէր խաղաղութիւն, որ սովորական չէր այլ յաւիտենական էր, Աստուածային էր: Թէեւ մարդիկ պիտի չհանդուրժէին ծնող նոր լոյսը եւ պիտի խաւարեցնէին զայն սակայն Հայ ժողովուրդը առաջին օրէն հաւատարիմ պիտի մնար այդ լոյսին, հակառակ իր դիմակայած «գողգոթա»ներուն: «Այսօր՝ նոյն գողգոթան... նոյն եղեռնը կը սպառնայ մեզի եւ այդպէս է որ կը դիմաւորենք Նոր Տարին եւ Ս. Ծնունդը: Սակայն մենք հրաշք գործող ժողովուրդ ենք, երբ համախմբուած ենք: Փաստ Սարտարապատը: Հայ ժողովուրդը ամէն տեսակ դժուարութեան դիմաց յաղթական է երբ



միացեալ է, որովհետեւ միասնութեան մէջ Աստուածային ներկայութիւն գոյութիւն ունի»: Սրբազանը անդրադարձաւ այն իրողութեան, որ երրորդ համաշխարհային պատերազմ մը կը սպառնայ մարդկութեան: Ան հետաքրքրական օրինակ մը բերաւ ըսելով. «*գիտնականի մը կը հարցուի թէ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհը Գ. Պատերազմէ մը ետք: Գիտնականը կը պատասխանէ, Գ. Պատերազմը չեմ գիտեր սակայն գիտեմ որ չորրորդ պատերազմը տեղի պիտի ունենայ քարերով եւ փայտերով*»: Զուգահեռ մը զծելով, այս օրինակը կը պատգամէ Քրիստոսի երկրորդ գալուստին նկարը, յետ աշխարհի կործանման: Սրբազանը խօսքը ուղղելով Աստուծոյ խնդրեց Բարձրեալէն. «*Քրիստոսի սերը եւ Աստուծոյ հաւատքը մեր սրտերուն՝ 1500 տարիէ աւելի դիմակայեցինք ամէն տեսակի դժուարութիւն, այսօր ալ տեղի պիտի չտանք դժուարութեանց եւ պարտադրանքներու, Տէր, սակայն հերիք է Տէր, կը խնդրենք որ մեր աչքերէն հեռանայ արցունքը: Թէեւ մեր ոսկորները կը ցաւին սակայն մեր հաւատքէն պիտի չհեռանանք եւ գիտենք որ Դուն պիտի գաս մեզի օգնութեան*»:

Սրբազան հայրը յիշեցուց որ մենք Աստուծոյ ապաւինած հսկայ աշխատանք եւ պարտականութիւններ ունինք մեր Հայրենիքին, Արցախին եւ մեր քոյր-եղբայրներուն նկատմամբ ընդհանրապէս:

«Իմաստութիւնը ունենանք ապրելու որպէս հաւատացեալ հայեր նաեւ մեր ուժերը իրար քով դնելով դառնանք միասնական ուժ, որ ոչ մէկ դժուարութիւն կարենայ զայն յաղթել: Ի հարկին մեր բազուկները պիտի դնենք ի սպաս այն կտոր մը հողը պահելու հրամայականին: ԹՈՅԼ ՊԻՏԻ ՉՏԱՆՔ որ օր մը ըսուի, թէ այստեղ ապրած է տաղանդաւոր ժողովուրդ մը, որ ինչ ինչ պատճառով այսօր գոյութիւն չունի»:

Շարունակելով իր պատգամը, Սրբազան հայրը ըսաւ. «Ս. Ծնունդը առիթ է բարիք գործելու: Տայտ՝ վ է որ մարդ հոգիով աւելի հարուստ կը զգայ, իսկ այդ հարստութիւնը ոչ ոք կրնայ իրմէ խլել: Մենք Աստուծոյ դեսպաններն ենք եւ մեր ԳՈՐԾՈ՛Վ տարածողը պիտի ըլլանք Աստուծոյ հաւատքին, Քրիստոնեայ հաւատքին, յաղթանակի՝ կրօնքին: Պիտի չամչնանք մեր հաւատքը յայտնելէն եւ ժպիտով, վճռակամութեամբ պիտի դիմագրաւենք նոր տարին» եզրակցուց Սրբազանը:



Սրբազանը ամէն տարի Առաջնորդարան կը հրաւիրէ Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները, անձամբ շնորհաւորելու համար անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը եւ տալու իր օրհնութիւնը: Մօտ վաթսուն հայրողիներ, ներկայացուցիչներ հայկական համարեա բոլոր կազմակերպութիւններուն, ընդառաջեցին Սրբազան հօր հրաւերին: Անոնք հիւրասիրուցան Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի ժրաջան տիկիներուն կողմէ: Հիւրերու կարգին էր նաեւ Ուիլուպի քաղաքի նահանգային պատգամաւոր Պարոն Թիմ Ճէյմս, որ խօսք առնելով շնորհաւորեց հայկական Սուրբ Ծնունդը եւ կատարեց իր բարեմաղթանքը այդ առիթով:

Զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ խօսք առին եւ շնորհաւորեցին զիրար, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին Սրբազան հօր եւ անդրադարձան միասնական գործունէութեան հրամայականին հայրենիքի եւ Արցախի դիմագրաւած դժուարութեանց յաղթահարման գործընթացին ի սպաս: Սրբազան հայրը, իր կարգին իր երախտագիտական զգացումները փոխանցեց ներկաներուն եւ իր լաւատեսութիւնը յայտնեց որ այսպէս, միասին ամէն ճիգ ի գործ պիտի կարենանք դնել մեր համայնքին եւ հայրենիքին պահանջներուն հասնելու նպատակով: Ան շեշտեց աշխատակիցներ ունենալու կարեւորութեան մասին, որ ինքը որպէս Առաջնորդ ունի յանձնա հայկական բոլոր կազմակերպութիւններուն, անոնք ըլլան կուսակցութիւններ թէ զանազան նպատակներ հետապնդող միութիւններ: «Այս դուռը բաց է ձեր բոլորին առաջ, ձեր ներկայութեամբ եւ ինքզինքս աւելի զօրացած կը զգամ: Մենք եկեղեցական ձեւերով կը ծառայենք եւ պիտի ծառայենք ազգին իսկ դուք՝ ձեր ձեւերով: Եթէ մահ կայ՝ այդ պայքարով պիտի ըլլայ, այս է Հայու ոգին: Անցեալին մեր կազմակերպութիւնները միասնաբար աշխատեցան չարը յաղթելու համար, այժմ դուք անոնց ժառանգորդներն էք: Այսօր մեր կարգն է պայքարելու միասնաբար որպէսզի գալիք սերունդները մեզ յիշեն եւ մենք ծառայենք անոնց որպէս օրինակ» պատգամեց Սրբազանը:





Շբ., 7 Յունուար – Ընկերակցութեամբ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բարապետանի եւ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեանի, Սրբազան հայրը հոգեհանգիստ մատուցեց Մաքուարի Փարթի գերեզմանատան հայկական բաժինին մէջ Ապրիլեան Եղեռնի յուշարձանին առջեւ: Անձրեւի առատութեան եւ օդի աննպաստ պայմաններուն պատճառաւ հաւատացեալները խուռներամ չէին կարողացած փութալ գերեզմանատուն: Սրբազան հայրը իր պատգամին մէջ գնահատեց հաւատա-

ցեալներու ներկայութիւնը եւ թելադրեց յառաջիկային չխրոսչիլ աննպաստ օդէն որովհետեւ յատկապէս այս օրը, մեր սիրելիներուն գերեզմանները այցելելով վառ կը պահենք եւ կը թարմացնենք անոնց յիշատակը: «Մեր այցելութեամբ, խունկ վառելով ըսել կ'ուզենք որ մենք կը շարունակենք իրենց աշխատանքը» եզրակացուց Սրբազանը: Ապա քահանայ հայրերուն հետ միասին, Սրբազանը այցելեց Հոգեւոյ Տէր Ադան Արք. Պալիօզեանի, Տէր Ռազմիկ Վարդապետ Պօղոսեանի եւ Տէր Արամայիս Քահանայ Սիրգայեանի շիրիմները եւ աղօթք բարձրացուց եւ օրհնեց զանոնք:

Յիշատակն արդարեւ օրհնութեամբ եղիցի:

Շբ., 7 Յունուար – Սրբազան հայրը մասնակցեցաւ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբի կազմակերպած Սուրբ Ծննդեան Հաւաքին եկեղեցոյ Էտկարեան սրահին մէջ: Սրբազանը արտասանեց իր սրտի խօսքը եւ իր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց Տիկնանց յանձնախումբի եւ Ծիսական խորհուրդի անդամներուն:



Կիր., 8 Յունուար – Նոր Սերունդ Մշակութային Միութեան (ՆՄՄՄ) հրաւերին ընդառաջելով, Առաջնորդ Սրբազան հայր Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, ընկերակցութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ ատենապետ Պարոն Պետրոս Զօրլուի եւ տիկնոջ, Cedrus ճաշարանին մէջ մասնակցեցաւ Միութեան կազմակերպած Ամանորի եւ Սուրբ Ծննդեան խրախճանքին: Միութեան նորակազմ վարչութիւնը իր այս անդրա-



նիկ ձեռնարկին հրաւիրած էր նաեւ Ռայտի քաղաքապետ Պրն Մարգիս Ետէլեանը եւ Տիկնանց Մարո Ետէլեանը: Ներկայ էին նաեւ ՄՂՀԿ Աւստրալիոյ Վարիչ Մարմնի նորընտիր անդամները ի դէմս Ատենապետ Պրն Սեպուհ Գալիաքեանի, ինչպէս նաեւ ՆՄՄՄ-ի վարչութեան կազմը ի դէմս Ատենապետ Պրն Վրէժ Քահրէճեանի: Հաւաքոյթին մասնակցեցան նաեւ մեծ թիւով Աւստրալահայեր, որոնք եկած էին ընտա-

նեկան եւ ընկերային ջերմ մթնոլորտի մէջ տօնելու Քրիստոսի ծննդեան Աւետիսն ու փոխանակելու ամանորեայ բարեմաղթանքներ:

Բացման խօսքով հանդես եկաւ Տիկին Գարլա Գաբրիէլեան- Տէր Ստեփանեան, որ նախ կոչ ուղղեց յիշել Արցախի մեր եղբայրներուն կրած զրկանքները եւ առաջարկեց զօրակցիլ՝ միասնաբար երգելով «Հայեր միացե՛ք» երգը: Ան ապա հաստատեց, թէ՛ Նոր Սերունդի երիտասարդներէ բաղկացած նոր կազմը շարունակական աշխատանք պիտի տանի՝ հայ մշակոյթն ու արուեստը հաղորդակից դարձնելու նորահաս սերունդին, որովհետեւ այդպէս կարելի է հայը Հայ պահել: «Նոր Սերունդ Մշակութային միութիւնը աւելի քան կէս դար Մփիւռքի հայահոծ գաղութներուն մէջ ուշագրաւ ներկայութիւն եղած է իր պարախումբերով, երգչախումբերով, թատերախումբերով եւ իր ծաւալած մշակութային գործունէութեամբ, անոնցմով դաստիարակած է հայ նոր սերունդները, անոնց տալով հայկական շունչ եւ ազգային ոգի: Այսօր մենք հպարտ ենք նաեւ մեր ռատիոժամով՝ «Նոր Սերունդի Չայն»-ով, որ այս տարի՝ 2023-ին կը նշէ իր 35-ամեակը, նորանոր յայտագիրներով եւ զրոյցներով», նշուեցաւ բացման խօսքին մէջ:



Իր սրտի խօսքին մէջ Ս.Դ.Հ.Կ Աւստրալիոյ շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Պարոն Մեպոսի Գալփաքեան շնորհաւորել է տք Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօները դրուատեց Նոր Սերունդ մշակութային Միութեան նորակազմ վարչութեան ջանքերով նշեալ խրախճանքի յաջող կազմակերպումը եւ գնահատեց տիկնանց օժանդակ յանձնախումբին աշխատանքները: Ահագանգելով, թէ 2023 թուականը ազգային առումով պիտի ըլլայ դժուար տարի մը, այնպէս ինչպէս կը յուշէ 2022-ի վերջին փուլը, Պրն Գալփաքեան դիտել տուաւ, որ այս ընթացքը անակնկալ կամ նորութիւն չէ, այլ սկսած է 44-օրեայ պատերազմի օրերէն: Անոր համաձայն, մեծ դաւադրութիւն մը կը մշակուի հայ ժողովուրդի գլխուն՝ Արցախէն մինչեւ Հայաստան, հասնելով նոյնիսկ դասական Մփիւռքի գաղութներուն մէջ ապրող հայերուն: «Ուստի, մենք պէտք է պատրաստ ըլլանք այս զարգացումներուն եւ այսօր մաղթանքս այն է, որ այս շրջանակէն մեծ թիւով հայեր ներգրաւուին զօրակցութեան աշխատանքին եւ

ունենան աւելի աշխոյժ մասնակցութիւն, անհրաժեշտութեան պարագային նոյնիսկ հրաժարելով սեփական հանգիստի մէկ բաժինէն:» Ապա աւելցնելով, ան ըսաւ թէ որոշում կայ զօրաշարժի ենթարկելու հաւաքականութիւնը, որպէսզի որեւէ դժուարութեան պարագային պատրաստ ըլլան բարոյական եւ նիւթական օգնութեան ձեռք մեկնելու Հայաստանին, Արցախին եւ Սուրիոյ ու Լիբանանի գաղթօճախներուն:

Ողջունելով Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմի առաջնորդ Բարձր. Տէր Հայկազուն Արք. Նաճարեանի տասնամեայ ծառայութիւնը, Պրն Գալփաքեան մաղթեց զայն յաջորդ տասնամեակին եւս տեսնել առաջնորդի պաշտօնին, որովհետեւ ան ձեռնհասօրէն եւ նուիրուածութեամբ ու անաչառութեամբ կը կատարէ իր պաշտօնը, ի մի բերելով ազգային կառոյցները: «Այս առիթով, մենք Սրբազան Հայրը կը մեծարենք յուշանուէրով մը, առ ի գնահատանք իր տասնամեայ ծառայութեան», ըսաւ Պրն. Գալփաքեան: Ան նաեւ շնորհաւորեց Ռայտ քաղաքի նորընտիր քաղաքապետ հայազգի Սարգիս Ետելեանը, անոր մաղթելով յաջողութիւն եւ բարեբեր աշխատանք: Ապա, յուշանուէրը ստանալէ ետք իր ողջոյնի խօսքը փոխանցեց նաեւ Առաջնորդ Սրբազանը:



Իր սրտի խօսքին մեջ Սրբազանը շնորհատրեց այս հաւաքը, ինչպէս նաեւ Պրն Գալփաքեանը որպէս նոր ատենապետ ՄԴՀԿ Աւստրալիոյ Վարիչ Մարմնին, որ իր հետ նորութիւն բերաւ եւ կը շարունակէ բերել: Խորհրդածելով նորի գաղափարին վրայ, Սրբազանը անհրաժեշտ գտաւ նոր մտքերու եւ նոր գաղափարներու մշտական հոսքը, որովհետեւ առանց անոնց որեւէ կազմակերպութիւն կը լճանայ եւ կը հիննայ: Իսկ նորութիւնը կ'ակնկալուի երիտասարդութենէն, որուն առիթ պէտք է տալ գործելու: Սրբազանը պատգամեց նեցուկ կանգնիլ ՆՍՄՄ-ի, որ իր մշակութային գործունէութեամբ կարենայ պայքարիլ Սպիտակ Ջարդին դէմ, որ շատ արագ կը սողակի մեր կեանքերէն ներս եւ մեզ կը պարպէ մեր Հայոյ ինքնութենէն:

Սրբազանը շնորհատրեց նորընտիր Բայտի հայազգի քաղաքապետ Պրն Սարգիս Ետէլեանը եւ դրուատեց անոր պատրաստակամութիւնը օգտակար հանդիսանալու հայութեան երբ իրեն դիմուի: Սրբազանը կոչ ուղղեց դիմել քաղաքապետին, տրուած ըլլալով որ հայութեան պէտքերը բազում են:

Խրախճանքը տօնական եւ հայկական երգերով խանդավառեց DJ Nazo (Նագօ Նագարեան):

Դ2., 11 Յունուար – Բայտ քաղաքի նորընտիր հայազգի քաղաքապետ Պարոն Սարգիս Ետէլեանի հրաւերին ընդառաջելով, ընկերակցութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Թեմական Խորհուրդի ստենապետ եւ փոխատենապետ Տիարք Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Ստեփան Գրգեաշարեանի, Սրբազան հայրը մասնակցեցաւ Պարոն Քաղաքապետին կազմակերպած Ուղղափառ Ս. Ծննդեան ընթրիքին, որ տեղի ունեցաւ Բայտի քաղաքապետարանի ժողովասրահին մէջ: Ներկայ էին քաղաքապետութեան նորընտիր կազմը եւ յիսունէ աւելի հայորդիներ:


Իր բարի գալստեան խօսքէն ետք Պարոն Քաղաքապետը հրաւիրեց Սրբազան հայրը բացատրելու թէ ինչո՞ւ ուղղափառ եկեղեցիները Դեկտեմբեր 25-ին չէին տօներ Սուրբ Ծնունդը: Սրբազան հայրը տուաւ խնդրուած բացատրութիւնը:

Փարոսի խմբագրութիւնը կը գնահատէ Պարոն Ետէլեանին նախաձեռնութիւնը, որ առաջին քայլն է քաղաքապետութեան շուրջ հաւաքելու Հայ եւ այլ քրիստոնէայ համայնքներու անդամները եւ կազմակերպութիւնները որպէսզի կարենայ լաւագոյնս ծառայել Բայտի բազմամշակոյթ ընտանիքին ընդհանրապէս եւ Հայ եւ այլ Քրիստոնէայ համայնքներուն՝ մասնաւորապէս:



Բշ., 12 Յունուար – Շնորհակալութեամբ ընդառաջելով Աւստրալիոյ մէջ Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Պրն Քայլար Միքայէլեանի հրաւերին, Փարոսի խմբագրապետ Նշան Պասամաճեան մասնակցեցաւ Զումով առցանց մամլոյ ասուլիսի մը, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Արցախի կառավարութեան: Ասուլիսին հրաւիրուած էին միջազգային եւ հայկական լրատուական գործակալութեանց ներկայացուցիչներ: Աւստրալիայէն մասնակցեցան «Արմենիա Մետիա»-ի եւ «Փարոս» ամսագրի ներկայացուցիչները: Նախաձեռնութիւնը կը համընկներ Արցախի շրջափակման առաջին ամսուան լրումին (12 Դեկտեմբեր 2022 – 12 Յունուար 2023): Այս առաջին նախաձեռնութիւն-փորձը, ճգնաժամային այս օրերուն, Արցախի ձայնը լսելի դարձնելու աշխարհին միջազգային լրատուութեան միջոցաւ՝ մեծապէս գնահատելի է: Յայտնենք, որ մամլոյ ասուլիսէն անմիջապէս ետք Ազրպէյճան շրջափակման ենթարկեց նաեւ ինթերնէթը, աւելի եւս մեկուսացնել փորձելով Արցախը, յաւելեալ ճնշում բանեցնելու համար Արցախի աննկուն ժողովուրդին վրայ որպէսզի ան լքէ իր երկիրը եւ հեռանայ: Բարեբախտաբար 48 ժամուան ընթացքին ինթերնէթային կապը վերահաստատուեցաւ:

Ասուլիսը կը ղեկավարուէր երկու մայրաքաղաքներէն՝ Ստեփանակերտ եւ Երեւան: Պետնախարարի կողքին կը մասնակցէին Արցախի հանրապետութեան կառավարական ղեմքեր, նախարարներ եւ պատասխանատուներ: Տեղեկութիւն տրուեցաւ ահուելի դժուար կացութեան մասին՝ պարենաւորման եւ ուտելիքի, կրթական, գիւղատնտեսական, քաղաքական, առողջապահական, ընկերահոգեբանական, տնտեսական, պիւտձեթային դաշտերէն ներս: Միջազգային, Հայաստանեան եւ Արցախի լրատուական գործակալութեանց անդամներ ուղղեցին իրենց հարցումները (Հայերէն, Անգլերէն եւ Ռուսերէն լեզուներով), որոնց սպառիչ պատասխան տուին պետնախարար Պրն Ռուբէն Վարդանեանն ու իր գործակիցները: Մամլոյ ասուլիսին յստակ պատգամն էր որ Արցախցի 120000 բնակիչները տեղի պիտի չտային որեւէ ճնշումի, թէկուզ Արցախցին ըլլար ամենէն անցանկալի պայմաններուն մէջ, պիտի պայքարէին մինչեւ վերջ, թէկուզ մանուկներ բաժանուած ըլլային իրենց ծնողներէն, թէկուզ Կեանքի Գիծ Բերձորը գրաւուած մնար Աստրալիանի կողմէ, թէկուզ կատարուէին իրաւունքներու լուրջ խախտումներ, թէկուզ 30000 աշակերտներ զրկուած ըլլային դպրոց յաճախելու իրենց իրաւունքէն: Պարոն Վարդանեան եւ իր խումբի անդամները վկայեցին որ հակառակ Աստրալիանի ի գործ դրած ճիգին հիասթափեցնելու Արցախի Հայ բնակչութիւնը՝ ժողովուրդը կը մնայ միակամ եւ վճռական: Անոնք յստակօրէն պատգամեցին որ Հայաստանի պետութիւնն ու ժողովուրդը, ինչպէս նաեւ հայկական Սփիւռքը, ամէն ճիգ ի գործ դնեն որ արագ աւարտ գտնէ այս շրջափակումը:



Պատասխանելով թղթակիցներու հարցերուն, Պարոն Վարդանեան նշեց դժուարութիւնները Ռուս խաղա-դապահ զօրքին, որոնց իրաւասութիւնները սահմանափակ են եւ բայց առանց անոնց՝ մինչեւ հիմա Արցախը գրաւուած պիտի ըլլար Ազերիներու կողմէ: Ան անհրաժեշտ գտաւ Ռուսական ներկայութեան երկարաձգումը:

Մանրամասնութիւններու համար դիտել հետեւեալ եութուպեան տեսահոլովակը.

[https://www.youtube.com/watch?v= FtNTs2CFTY](https://www.youtube.com/watch?v=FtNTs2CFTY):

Բշ., 16 Յունուար – Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան կեդրոնի խնամակալութեան հերթական ժողովին:



Գ2., 17 Յունուար – Սրբազան հոր նախագահությամբ, Առաջնորդարանին մեջ տեղի ունեցավ Աստրալահայ Միացեալ Ղեկավար Խմբաւորումի (Joint Leadership Group) երրորդ ժողովը սաստաք հանդիսանալու համար Արցախին:

Ե2., 19 Յունուար – Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան մասնակցեցաւ Հայ Դատի Յանձնախումբի եւ Աստրալիոյ Երիտասարդաց Միութիւններու Միացեալ Մարմնին կողմէ Միտնիի Քլարընս փողոցին վրայ գտնուող Արտաքին Գործերու Նախարարութեան գրասենեակին առջեւ տեղի ունեցած բողոքի ցոյցին: Արժանապատիւ Քահանայ հայրը կը ներկայացնէր Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը: Հարիւրեակ մը ցուցարարները իրենց ցատումը արտայայտեցին Աստրալիոյ պետութեան բռնած դիրքին, որ ի տես եւ ի լուր Ատրպէյճանի կողմէ Արցախի մօտ մէկուկէս ամսուան շրջափակման, ոչ մէկ դատապարտութիւն կատարեց Ազերի պետութեան եւ ո՛չ մէկ մարդասիրական նախաձեռնուիւն՝ Բերձոր (Լաչին)ի միջանցքի բացման ի նպաստ: Խօսք առին Հայ Դատի Յանձնախումբի գործադիր տնօրէն Մայքըլ Գոլոգոսեան, Արցախի Աստրալիոյ ներկայացուցիչ Քայլար Միքայէլեան եւ Նանոր Շուկայեան, որոնք կոչ ըրին Արտգործ նախարարուհի Փէնի Ուոնկին զարթնիլ թմբիբէն եւ դատապարտել Ազերիներու կողմէ Արցախի անմարդկային շրջափակումը եւ պահանջել Բերձորի միջանցքին անմիջապէս բացուիլը:



Յոյցը աւարտեցաւ Տէր Աւետիս Քահանայ հոր եւ Վերապատուելի Գրիգոր Եումուշաքեանի աղօթքներով:

Բ2. 23 Յունուար – Սրբազան Հայրը նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի հերթական ժողովին:



Վիր., 29 Յունուար – Սուրբ Յարութիւն Առաջնորդանիստ մայր եկեղեցոյ մէջ պատարագեց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Սովորութիւն է աւանդական Խաղողօրհնէքի արարողութիւնը կատարել Յունուարի աւարտին կամ Փետրուարի սկիզբը: Խաղողօրհնէքը Հայաստանի եւ Միջին Արեւելեան, Եւրոպական երկիրներու եւ ԱՄՆ-ի մէջ տեղի կ'ունենայ Օգոստոսին: Յընթացս Պատարագի իր քարոզը տուաւ Բարձրաշնորհ Առաջնորդ Սրբազան հայրը: Ան անդրադարձաւ խաղողօրհնէքի խորուրդին եւ սովորութեան, խորհրդածելով տալու եւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու մասին, յորդորելով չհպարտանալ կեանքի մէջ մեր կատարած ձեռքբերումներով, եւ չմոռնալ զԱստուած:

Ապա թափօրով դուրս եկաւ Սրբազան հայրը եւ ընկերակցութեամբ Աւագ քահանայ հայրեր՝ Տէր Նորայր Բաթանեանի եւ Տէր Պարթեւ Գարագաշեանի, ինչպէս նաեւ Հոգեւոր հովիւ Տէր Աւետիս Համբարձումեանի, օրհնեց խաղողը ի ներկայութեան բազմաթիւ հաւատացեալներու, նուիրուած՝ ուխտաւոր հաւատացեալ-ներէ:

Նախքան քարոզ, Սրբազան հայրը շնորհաւորեց Տէր Նորայր Աւագ

Քահանայ հոր քահանայական ձեռնադրութեան 38րդ տարեդարձը եւ մաղթեց որ Աստուած «զինք իր հաւատքին մէջ անսասան պահէ եւ մենք կարենանք վայելել իր ազնիւ հոգին»:

Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ քահանայ հայրը եւ կը մաղթէ անոր առողջ ու երջանիկ տարիներ:



Ֆառակցագիր Տիտիզեաններուն Թարգմանուած Սրբագան Հօր Ուղարկած Նամակէն Անգլերէնով 22 Յունուար 2023

Ազնուափայլ Տիկին Էլզա եւ Տիտիզեան Ընտանիք,

Խոր ցաւով տեղեկացայ Պարոն Հայկ Տիտիզեանի մահուան մասին: Մեծ մարդ մը, հաւատացեալ, լեցուած անհուն սիրով հանդէպ իր Հայրենիքին եւ Հայ ժողովուրդին, եւ մօտիկ բարեկամ՝ Հայ Եկեղեցւոյ:

Պարոն Տիտիզեանը ճանչցայ 1990-ական թուականներուն երբ ԱՄՆ Արեւելեան Թեմին Առաջնորդի Փոխանորդ էի: Ինք այն օրերուն հետաքրքրուած էր Ս. Ներսէս Դպրեվանքը ընդարձակելով, կամ զայն փոխադրելով այլ վայր: Առաջին իսկ օրէն նկատեցի, որ ինք, որպէս յաջող գործարար անձնատրութիւն, պահանջկոտ էր եւ չէր քաշուեր քննադատելէ, երբ սկսուած գործ մը իր հետապնդած նպատակէն շեղէր: Աւելի ուշ, 1995-1999 երբ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին օրով Գեորգեան Ճեմարանի տեսչութիւնը ստանձնեցի, մեր բարեկամութիւնը աւելի սերտացաւ եւ զինք աւելի մօտէն ճանչցայ:

Իր սերն ու հիացմունքը հանդէպ երջանկայիշատակ Գարեգին Ա-ին, չափ ու սահման չունէր: Ան կարողացաւ ի մի բերել տալ այս մեծ հոգեւորականին, Աստուածաբանին եւ մտաւորական Կաթողիկոսին բոլոր գործերը եւ պարբերաբար, որպէս մատենաշար հրատարակելով, զանոնք ցրուել բոլոր թեմերուն, աշխարհի չորս ծագերուն: Անոր գործակցութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հետ շարունակուեցաւ Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալութենէն ետք ալ: Աստուածաբանական Կեդրոն մը կառուցուեցաւ Սուրբ Էջմիածնի մէջ ի յիշատակ Գարեգի Ա-ին: Այլ օրինակ մը ստեղծագործ հաւատացեալ անձին՝ մօտ 9 մեթր բարձրութեամբ Խաչքարն է, կրկնօրինակը Արեւմտեան Հայաստանի 15րդ դարու բացառիկ խաչքարի մը, որ հպարտութեամբ կը դիմաւորէ բոլոր հաւատացեալները, որոնք Սուրբ Էջմիածնին մուտք կը գործեն:

2013-ին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին Առաջնորդ եւ Հնդկաստանի ու Ծայրագոյն Արեւելքի երկիրներուն Հայրապետական Պատուիրակ նշանակուելէս ետք, մեր համագործակցութիւնը ալ աւելի մօտիկ դարձաւ: Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզեաններ իրենց կեցութեան մէկ մասը կ'անցնէին Կոլտ Քոսթ- Աւստրալիա, ինչ որ առիթ տուաւ վայելելու անոնց ներկայութիւնը եւ իմաստութիւնը: Նորին Սրբութիւն Գարեգին Բ նշանակեց Պրն Տիտիզեանը գլխաւորելու յանձնախումբ մը, զբաղելու Հարաւ-Արեւելեան Ասիոյ հայկական եկեղեցիներով: Անհամար ժամեր տրամադրուեցան ժողովներու, տեղի ունեցան անձնական բազում այցելութիւններ, որոնց շնորհիւ կարելի եղաւ Սուրբ Էջմիածնի իրաւունքները պահպանել Տաքայի Հայկական Եկեղեցւոյ: Տակաւին ճիգերը կը շարունակուին նոյն իրաւունքները պահպանելու Եանկոնի (Միանմար) հայկական եկեղեցւոյ: Տիտիզեան ընտանիքին կողմէ նախաձեռնուած ծրագիրներ կը ծաւալին աշխարհի ամէն կողմ, Պուէնոս Այրէսէն Նիւ Եորք , Էջմիածնէն Երեւան եւ Սիւնի:

Վերջին տասնամեակին, չկար կանչ մը Էջմիածնէն, որուն չպատասխանէր Տիտիզեան ընտանիքը, որովհետեւ Հայկ Տիտիզեան կը հաւատար որ Հայ Եկեղեցիին միջոցաւ էր որ կարելի էր պահել մեր հաւատքը, միասնութիւնը եւ ինքնութիւնը:

Կը սգանք իր կորուստը սակայն կը սփոփուինք ամբողջական կեանք մը ապրած ըլլալու իր թողած ժառանգէն, բազում անձերու հետ կիսած իր տաղանդներէն եւ ձեռքբերումներէն: Այժմ իր յաջորդ սերունդին կը մնայ շարունակել այս ապրելաձեւը, իր կիսատ թողած աշխատանքը եւ այդ ձեւով վառ պահել անոր յիշատակը այս աշխարհին մէջ :

Թող Աստուած խաղաղութեան մէջ հանգչեցնէ Պրն Հայկին հոգին եւ Սուրբ Հոգին մխիթարէ Տիտիզեան ընտանիքը, ազգականներն ու բարեկամները:

«Երանելի են այն մեռելները որոնք Տիրոջնով կը ննջեն... անոնք պիտի հանգչին իրենց աշխատանքէն, քանզի իրենց գործերը պիտի հետեւին իրենց» (Յայտնութիւն 14:13)

Օրհնութեամբ՝



Հայկագուն Արքեպիսկոպոս Նաճարեան
Առաջնորդ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿՐ ՍԳԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅԿ ՏԻՏԻԶԵԱՆԻ ՄԱՀՐ

Զուակը Եղեռնէն ճողոպրած ծնողքի մը, Հայկ Տիտիզեան ծնած է 1930-ին, Երուսաղէմի մէջ: Նախնական ուսումը՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարան, ապա Երուսաղէմի Անգլիական Դպրոց: 1947-ին համալսարանական ուսումը կը ստանայ Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ: Երուսաղէմի մէջ տիրող վտանգաւոր կացութեան պատճառով, ծնողքը, քոյրերն ու եղբայրները կը փոխադրուին Պէյրութ, ետ թողնելով ամէն ինչ, սկսելու համար նոր կեանք մը Պէյրութի մէջ:



1952-ին, Հայկ կը միանայ հոր Յակոբին, դեռ 1923-ին հոր եւ մեծ հորեղբոր կողմէ հիմնադրուած՝ գործածուած հագուստներու վաճառման հաստատութեան: Ծնորհիւ իր վաճառականական հոտառութեան, ճարպիկութեան եւ մանաւանդ աշխատասիրութեան, Հայկ կարողացաւ ընդարձակել գործը եւ վաթսունական թուականներու երկրորդ կիսուն, ան սկսաւ մատակարարել զինուորական հագուստ եւ ոտնամաններ զանազան կառավարութեանց բանակներուն: Միեւնոյն ատեն, Հայկ Տիտիզեան կը ճիւղաւորէ գործը ու կը հիմնէ անշարժ կալուածի վաճառականութեան գրասենեակներ Լիբանանի, Միացեալ Նահանգներու, Յորդանանի, Սէուտական Արաբիոյ, Շուէտի եւ Աւստրալիոյ մէջ:

1964-ին կ'ամուսնանայ Էլզա Ազիբեանի հետ: Կը բախտաւորուին երեք զուակներով:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով, Տիտիզեան ընտանիքը կը փոխադրուի Զուիցերիա, իսկ ընկերութեան կեդրոնական գրասենեակը կը փոխադրուի Յունաստան: 1976-ին ընտանիքը վերջնականօրէն կը հաստատուի Լոնտոն:

1980-1990 թուականներուն եւ անկէ ետք, Տիտիզեանի գործը կը բարգաւաճի եւ կը ճիւղաւորուի: Կը բացուին ուտեստեղէնի արտադրութեան եւ ցրտումի ընկերութիւններ նոր մակնիշներով:

Սակայն, Հայկ Տիտիզեան իր կուտակած նիւթական հարստութենէն չի մոռնար բաժին հանել իր ազգին եւ եկեղեցւոյ: 1960-ականներուն ան սկսաւ օգնել որբերու, չքաւոր փոքրիկներու, չքաւոր ընտանիքներու:

Իր սիրած, յարգած եւ իր հիացմունքին արժանացած անձերէն մին էր Երջանկայիշատակ ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որուն հետ իր առաջին հանդիպումը տեղի ունեցած էր

Տիտիզեաններու Լիբանանի ամառանոցի բնակարանին մէջ: Յետ Գարեգին Վեհափառի վախճանման, Հայկ եւ Էլզա Տիտիզեան կատարեցին անոր փափաքը՝ հրատարակել Վեհափառին ամբողջական գործերը եւ կառուցել Աստուածաբանական Կեդրոն: Գիրքերը, ցարդ թիւով 17 հատոր, կը բովանդակեն Վեհափառ հայրապետին կեանքը ինչպէս նաեւ գրական եւ աստուածաբանական ստեղծագործութիւնները որպէս «Գարեգին Ա. Աստուածաբանական եւ Հայագիտական Մատենաշար»: Հրատարակութիւնները կը նուիրուին հոգեւոր եւ կրթական կեդրոններու, համալսարաններու եւ գրադարաններու՝ աշխարհի չորս դին, ինչպէս նաեւ կարեւոր անձնաւորութեանց եւ բարեկամներու: Գիրքերուն ընդմէջէն կը հաստատուին Վեհափառ հօր մտաւորականի, փիլիսոփայի եւ աստուածաբանի որակաւոր յատկութիւնները:

Անսալով Վեհափառ Հօր երկրորդ խնդրանքին՝ Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզեան ամուրը նախաձեռնեցին կառուցման հոգեւորականներու աստուածաբանական ուսուցման երկու կեդրոններու: Առաջինը, Գարեգին Ա. Կրթական Կեդրոնը, կառուցուեցաւ 2015-ին, ուր հոգեւորականներուն կը մատակարարուի բարձրագոյն կրթութիւն եւ կեցութեան բնակարաններ: Երկրորդ աստուածաբանական կեդրոնը Սուրբ Ներսէս Աստուածաբանական Կեդրոնն է Նիւ Եորքի մէջ: Սուրբ Յակոբ մատուռը նաեւ կառուցուեցաւ Արմոնք-Նիւ Եորքի մէջ ի յիշատակ Հայկ Տիտիզեանի ծնողաց:

Հայկ Տիտիզեան ջատագով մըն էր Հայ Եկեղեցւոյ եւ Հայերէն լեզուին ու մշակոյթին յաւերժացման, որուն համար ան օգտակար դարձաւ աշխարհացրիւ Հայ համայնքներուն՝ Մինկափուրէն մինչեւ Արժանթին, մինչեւ Հայաստան եւ Մերձաւոր Արեւելք:

2013 թուականին, համախոհներու հետ, հետազօտական այցելութեամբ, Հայկ Տիտիզեան մեկնեցաւ Տաքա, Պանկլատէշ, նպատակ ունենալով փրկել Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յարութիւն Եկեղեցին, կառուցուած 1781-ին: Աւելի ուշ, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը մեկնեցաւ Միանմարի Եանկոն քաղաքը: Երկու պատուիրակութեանց մաս կը կազմէր նաեւ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան: Պատուիրակութիւնը կարողացաւ փրկել Եանկոնի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Հայ Առաքելական եկեղեցին, կառուցուած 1862-ին:

Հայկ եւ Էլզա Տիտիզեան նաեւ բարերարներ են «Երեւան իմ Սէր» ծրագրին: Այս կեդրոնին բացումը տեղի ունեցաւ 2017-ին, անդամաւորձ, հաշմանդամ, ապաստանեալ եւ տարագրեալ փոքրիկներու ընկերային, կրթական եւ մշակութային դարմանում տալու համար: Իսկ 2020 թուականին անոնք նիւթական նպաստ յատկացուցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին Պսկաձէ Ժահրով վարակուածներու օգնութեան ֆոնտին ի նպաստ:

Հայկ Տիտիզեան մեծ բարեկամ էր Առաջնորդ Սրբազան Հօր՝ Հայկազուն Արք. Նաճարեանին ինչպէս նաեւ «Փարոս» ամսագրին: 2019-ի Վեհափառ հօր Աւստրալիա այցելութեան, Տէր եւ Տիկին Տիտիզեաններ մաս կազմեցին անոր շքախումբին: Փետրուար 3, 2019-ը յիշատակելի օր էր Առաջնորդարանիս համար, երբ, յաւարտ Սուրբ եւ Անմահ պատարագին, մատուցուած Վեհափառ Հօր կողմէ, Առաջնորդարանի «Լօրիս եւ Սօնիա Խանձեան» սրահին մէջ Վեհափառ Հայրապետը Արքութեան տիտղոս շնորհեց Հայկազուն Սրբազան Հօր: Սօտէն ճանչնալով Հայկազուն Սրբազանն ու անոր հոգեւոր ծառայութիւնը, Տէր եւ Տիկին Տիտիզեաններ իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Վեհափառ հօր եւ ի սրտէ շնորհաւորեցին Սրբազանը Արքեպիսկոպոսութեան տուուչութեան համար: Հայկ Տիտիզեանի համար եկեղեցւոյ մէջ իւրաքանչիւր յառաջդիմութիւն զինք կը խանդավառէր, այդ ըլլար Աւստրալիա, Պանկալտէշ, Նիւ Եորք, Հայաստան, Երուսաղէմ թէ Պէյրութ:

Ինչպէս ըսինք, Տիտիզեանները մեծ բարեկամներ էին նաեւ «Փարոս»ին զոր կ'ընթերցէին ծայրէ ի ծայր: Կը հրապարակենք երկու տարբեր առիթներով անոնց կատարած գնահատանքն ու վկայութիւնը Փարոսի առնչուած որ կարելի է կարդալ էջ 44-ի մէջ:

Լուրեր Ծովիտերէն

ՄԵԼՊՈՒՐՆ Սուրբ Աստուածածին Եկեղեցի

Մելպուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցին ունեցաւ հետեւեալ գործունէութիւնը Յունուար 2023-ի ընթացքին.

ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Յունուար 5-ի երեկոյան, Մելպուրնի Սբ. Աստուածածին Եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ և Ամմահ Պատարագ: Պատարագիչ՝ Արժանապատիւ Տէր Խաչեր քահանայ Յարութիւնեան: Յաւարտ Պատարագի, Եկեղեցոյ կից սրահին մէջ, Ծիսական խորհուրդի, Դպրաց դասի, Տիկնանց միութեան և հաւատացեալներու մասնակցութեամբ կատարուեցաւ Տնօրինէքի արարողութիւն: Նոյն երեկոյ, Տիկնանց Միութեան կազմակերպութեամբ, Եկեղեցոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Խթումի խրախճանք, որը անցաւ ճոխ և խանդավառ մթնոլորտի մէջ:



ՏՕՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ և ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

6 Յունուար - Սուրբ Աստուածածին Եկեղեցին կը յորդէր մելպուրնահայ հաւատացեալներով, որոնք եկած էին իրենց աղօթքը բարձրացնելու առ Բարձրեալն մեր Փրկչին Սուրբ Ծննդեան առթիւ: Պատարագիչ քահանան էր Հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեանը: Տէր հայրը, յընթացս Պատարագի, ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Ծննդեան Պատգամը: Եկեղեցոյ ընկալեալ աւանդութեան համաձայն, Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Ջրօրհնեաց Հանդէս: Միտոնահամ ջուրը բաժնուեցաւ ներկաներուն: Այս տարի Եկեղեցոյ Սուրբ Խաչի կնքահայրն էր Բարեշնորհ Կարապետ սարկաւազ Վարդանեանը: Սուրբ Խաչը Վարդանեաններու տունը մնաց մինչև Յունուար 18-ը: Տէր Խաչեր, Ծիսական Խորհուրդի անդամներուն և Եկեղեցոյ Սուրբ Խորանին սպասարկողներուն ուղեկցութեամբ այցելեց Վարդանեաններու բնակարանը և տնօրինէքի արարողութենէն ետք, Սուրբ Խաչը վերադարձուեցաւ Եկեղեցի:



Ուէնուրրթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Կիրակի, 1 Յունուարին տարուան առաջին Պատարագի ընթացքին Արժ. Տ. Միւռն Քինյ. Աւետիսեանը իր քարոզին մէջ նոր տարուան առիթով կոչ ուղղեց հաւատացեալներուն, որ «Աստուծոյ առջեւ պէտք է լուսալ հին մարդու հոգեւոր պիտերը եւ նորոգուած սրտով, մտքով ու հոգիով մտնել նոր տարին»: Աւարտին կատարուեցաւ նուրի օրհնութիւնը, յիշելով որ Աստուած երբ ստեղծեց ամէն բան, տեսաւ որ չափազանց բարի են եւ օրհնեց զանոնք: Քահանայ Հայրը փառք տալով ամենակարող Աստուծոյ օրհնեց նուրերն ու այգեստանները եւ աւարտին՝ շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուր նուիրող ուխտաւորներուն, մաղթելով որ ընդունելի ըլլան անոնց ուխտերն ու բարի փափաքները:



Հինգշաբթի, 5 Յունուարին Ճրագալոյցի Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Հայկազուն Արք. Նաճարեանը՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդը: Հակառակ ոչ բարենպաստ կլիմային, եկեղեցին կը յորդէր հոծ բազմութեամբ: Սրբազան Հայրը Պատարագը մատուցանելէ ետք փոխանցեց օրուան խորհուրդը, թէ ինչպէս աւելի քան 2000 տարիներ առաջ հրեշտակները Տիրոջ ծնունդի աւետիսը կու տային հովիւներուն, որպէսզի մարգարէութիւններն ալ իրականանային, թէ Դաւիթի քաղաքէն պիտի գար թագաւորը: Համամարդկային այս թագաւորութիւնը հիմնուած էր Սիրոյ վրայ: Ան սէրը բացատրեց, որպէս անմնացորդ նուիրում ուրիշին ուրախութեան մէջ: «Սէրը նուիրումի եւ տառապանքի ճանապարհ է, ինչպէս մեր Տէրը ինք ցոյց տուաւ մարդկութեան, խմելով եւ վերցնելով այդ դառն գաւաթը մինչեւ խաչի մահուան յանձնուիլը: Ծնունդը հոգեւոր վերապրում մըն է, որ առիթ կու տայ եւս հաւատալու Քրիստոսի յարութեան լոյսին: Ան յիշեց Արցախի շրջապատուած հայերը, որ այսօր ինչ ձեւով, հոգեկան տառապանքներու մէջ կը նշեն Ս. Ծնունդը: Թշնամիին նպատակը բացայայտելով շեշտեց, թէ ան ինչպէ՛ս հայ անունը կ'ուզէ ոչնչացնել աշխարհէն: Տօնելով Քրիստոսի ծնունդը կ'աղօթենք ոչ միայն մեր անձերու փրկութեան եւ խաղաղութեան համար, այլեւ Աստուծոյ առջեւ ծունկի կու գանք, որպէսզի խաղաղութիւն տայ մեր աշխարհին սկսելով Արցախէն, Հայաստանի մէջ եւ տակաւին Սուրիոյ, Լիբանանի եւ Իրաքի, այնտեղ որտեղ հայութիւնը ունի տառապանք, լաց եւ վիշտ. թող որ նորածին մանուկը այդ վիշտը ամոքէ: Քրիստոս մեր հոգիներուն մէջ ալ պիտի ծնի տալով ուժ, եռանդ, կեանք եւ մաքրութիւն, ազգովին մաքրուելու մեր սխալներէն եւ մեղքերէն: Ան յորդորեց որ սխալը չփնտռենք մեր բարեկամներուն մէջ, այլ դուրս թեքենք այդ սխալը եւ այդ գիտակցութիւնը մեզի միացնէ, որպէս համընդհանուր ժողովուրդ: Ան շեշտեց թէ Աւստրալիոյ խաղաղ պայմաններուն մէջ ապրելով մեր հայեցի դիմագիծը պահենք եւ փոխանցենք յաջորդ սերունդներուն, ըսելով.



«Միայն հպարտանալը որպէս առաջին քրիստոնէայ ժողովուրդ անբաւարար է, պէտք է այդ հաւատքը

ապրինք եւ ցոյց տանք, նախ մենք զոհ ըլլալով մեր հաւատքէն»: Սրբազան Հայրը նշեց նաեւ, որ եկեղեցին միայն շէնքով չապրիր, այլ ժողովուրդն է եկեղեցիին ոգի տուողը, միասնական աղօթքները գերագոյն ուժ կը դառնան Աստուծոյ խորանին առջեւ: Ոչ միայն եկեղեցականի պարտականութիւնն է ունենալ քրիստոնէական վայել հաւատքի կեցուածք, այլեւ՝ ամէն հայու: Ապա աղօթելով մաղթեց, որ Նորածին Փրկիչը մտնէ մեզմէ ամէն մէկուն հոգիներէն ներս, զօրացնէ, սրբէ ու մաքրէ մեր բոլոր մեղքերը եւ մեր սրտերն ու հոգիները դարձնէ Աստուծոյ իսկական խորան եւ վերջապէս ըսաւ. «Իսկապէս հայ ժողովուրդը արժանավայել է կոչուելու Քրիստոսի ընտրեալ ժողովուրդը»: Քարոզը եզրափակեց հրեշտակներուն անտումը փոխանցելով. «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ», իսկ ժողովուրդը բացականչեց. «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի»: Բազմութիւնը Ս. Հաղորդութիւն ստանալէ ետք դպրաց դասի Թափօրի առաջնորդութեամբ բարձրացաւ «Պաթմանեան» սրահ, ուր Սրբազան հայրը անդամական տնօրինելի արարողութեամբ օրհնեց աղ, ջուր եւ հաց եւ ապա «Պահպանիչ» աղօթքով արձակեց ներկաները:



Ուրբաթ, 6 Յունուարին եկեղեցին կը վայելէր եւ կը ցնձար խումներամ բազմութեամբ մը, որ եկած էր տօնակատարելու մեր Տիրոջ եւ Փրկչին Աստուածայայտնութեան սուրբ տօնը: Օրուան կնքահայրութեան պաշտօնը ստանձնած էր փոքրիկն Գեորգ Միմոնեանը:



Քահանայ Հայրը իր քարոզին մէջ ընդարձակօրէն ներկայացուց Ս. Ծննդեան դիպաշարը եւ փոխանցեց օրուան խորհուրդները: Ան նշեց, թէ Ս. Սկրտութեան պահուն Ս. Երրորդութեան ինքնայայտնութեամբ, կարելի է ըսել թէ այսօր նաեւ «Ս. Երրորդութիւն» եկեղեցոյս անուանակոչութեան տօնն է...:

Տէր Միւռնը բարեմաղթութեանց առընթեր տասնհինգ կէտերու մէջ ամփոփեց Տիրոջ Ս. Ծննդեան դիպաշարերը, կապելով զանոնք մարդու առօրեայ կեանքի օրինակներուն, որոնք արդէն կենդանի միութարութիւն են յաղթահարելու ժամանակաւոր մեր կեանքի փորձութիւնները, Տիրոջ կեանքի օրինակներով: Կատարուեցաւ նաեւ Ս. Միւռնով ջրօրհնէք նշան Տիրոջ Ս. Սկրտութեան:



Ապա ներկաները միաբերան զիրար ողջունեցին, ըսելով. «Քրիստոս ծնաւ եւ Յայտնեցաւ», «Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»: Աւարտին բազմութիւնը ուղղուեցաւ դէպի «Պաթմանեան» սրահ զիրար շնորհաւորելու, օրհնուած ջուրով շիշերը ստանալու եւ հիրապիրուելու:



Շաբաթ, 7 Յունուարին ըստ ասանդութեան Արժ. Տ. Միւռն ֆինյ. Աւետիսեանը կատարեց հոգեհանգստեան արարողութիւնը «Rookwood» գերեզմանատան հայկական բաժինին մէջ: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Շաբաթ, 28 Յունուարի առաւօտեան ժամը 10:00ին, Համազգայինի Սերոբ Փափազեան Շաբաթօրեայ դպրոցի 2023 տարեշրջանի բացման արարողութիւնը կատարուեցաւ մասնակցութեամբ՝ «Ս. Երրորդութիւն» Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին՝ Արժ. Տ. Միւռն ֆինյ. Աւետիսեանի:

Կիրակի, 29 Յունուարի յաւարտ Ս. Պատարագին կատարուեցաւ

ասանդական «Խաղողօրհնէք»: Ուխտաւոր բազմութիւնը հաւաքուած էր նորոգուելու եւ օրհնուելու օրուան խորհուրդով: Ընթացքին, Արժ. Տ. Միւռն ֆինյ. Աւետիսեանը կատարեց նուիրաբերուած խաղողի օրհնութիւնը, օրհնելով բերքը, այգիները, ուխտաւոր բազմութիւնը եւ համայն հայոց աշխարհի բերքն ու ժողովուրդը: Նոյն օրը վերամուտն էր Կիրակնօրեայ դպրոցի «Պարտիզագնացութեան» յայտագիրով, խաղով, գոհութեամբ, Ս. Հաղորդութեան մասնակցութեամբ եւ փառաբանութեամբ: Աշակերտութիւնը միասնաբար ուրախ եւ աշխուժ մթնոլորտով, բաժնուած տարիքային դասարաններով՝ վայելցին բնութիւնն ու ուսուցչակազմի կողմէ պատրաստուած օգտաշատ ծրագիրը:



Մարիա Թաշճեան Թոգմաքճեան

ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱ

18 Դեկտեմբեր 2022-ին Օքլանտի մէջ մահացաւ համայնքի զաւակներէն ճոն Տակլըս Զօհրապը եւ թաղուեցաւ Ուէլինկթըրնի մէջ: Զօհրապ գերդաստանը մեծ գերդաստան է, որոնց նախահայրերը Նոր Զելանտա գաղթած են 19րդ դարու կէսերուն: Զօհրապները կը սերին Մանուչարեան գերդաստանէն՝ Պարսկաստան: ՆՁ առաջին գաղթող Քոնսթանթին Զօհրապի անունով Ուէլինկթըրնի մէջ փողոց մը գոյութիւն ունի: Այսօր Զօհրապները բոլորովին ձուլուած են եւ դաւանանքով Անկլիքան են: Բացառութիւն էր ճոն Զօհրապը ինչպէս նաեւ անոր հայրը՝ Տակլըս Զօհրապը, որոնք խոր գիտակցութիւն ունէին իրենց արմատներուն: 1996 թուականին Նոր Զելանտայի Հայկական Միութիւնը ստեղծուեցաւ: Երբ համայնքը կապ հաստատեց ճոնին հետ ան սատար հանդիսացաւ Միութեան: Լաւ բարեկամ էր հոգելոյս Ադան Արք Պալիօզեան Սրբազան հօր: Երկար տարիներ ճոն բնակեցաւ Հայաստան որպէս International Monetary Fund(IMF)ի տնօրէն:

Յունուար ամիսը արձակուրդներու ամիս է, իսկ Հայկական Սուրբ Ծնունդի ու Զրօրհնէքի տօները այս ամսուն են: Օքլանտի Հայ համայնքը, թէկուզ քանակով փոքր, թէկուզ արձակուրդի մէջ՝ տօնեց Սուրբ Ծնունդը եւ Զրօրհնէքը: Ի սկզբանէ, Սրբազան հօր կարգադրութեամբ, որոշուած էր Սուրբ պատարագ մատուցանել, որուն համար Արժանապատիւ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան Միտնիէն պիտի ժամանէր եւ կատարէր բոլոր ծէսերը: Սակայն, առողջական պատճառներով քահանայ հայրը չկարողացաւ ճամբորդել,

հետևաբար տեղի ունեցավ Սուրբ Ծննդեան եւ Ջրօրհնէքի արարողութիւն, կազմակերպութեամբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին, ղեկավարութեամբ Նշան Սարկաւազ Պասնաճեանի եւ մասնակցութեամբ Զուարթնոց դպրաց դասին եւ դպիրներու:

Թաքափունայի Սուրբ Պետրոս Անկլիքան եկեղեցոյ մէջ հաւաքուած էին փոքր թիւով Հայեր, հազիւ 15 անձ: Պատրաստուած էր յատուկ արարողակարգ, որուն մէջ կ'ընդգրկուէին շարականներու երգեցողութիւն դպրաց խումբին կողմէ, ճաշու գիրքի ընթերցում, Աւետարանի ընթերցում, Օրուան Պատգամ, Անդաստան/Լոնօրհնէք: Միջոցին՝ տեսանիւթերու ցուցադրում:



Այսպէս, դպրաց դասը յաջողապէս երգեց «Սուրբ Աստուած»ը, «Մարմին Տէրունական»ը, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»ը, «Սուրբ Սուրբ»ը, «Հոգի Աստուծոյ», Օրհնեցից գէր»ն ու «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ»ը: Պաստառի վրայ հետեւեալ Ծնունդի եւ Ջրօրհնէքի տեսանիւթերը ցուցադրուեցան. «Մեծացուցէ Անձն իմ գէր», «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի», «Ով Զարմանալի եւ Այսօր Զայնն Հայրական», «Այսօր Տօն է» եւ «Աւետենք Աշխարհի»: Ճաշու գիրքը կարդացին՝ պարմանուհի Լուիզա Գրիգորեանը՝ Հայերէնով իսկ պատանի Դաւիթ Սարգսեանը՝ Անգլերէնով: Անդաստանին իրենց մասնակցութիւնը բերին դպրաց խումբը, պատանի Դաւիթ Սարգսեանը, Աշոտ Գրիգորեանը (Խաչ) եւ Յակոբ Երլտրզեան (բուրվառ): Անդաստանի աւարտին Տիկին Սալբի Երլտրզեան ընթերցեց Լոնօրհնէքի Աղօթքը:

Օրուան պատգամը փոխանցեց Նշան Սարկաւազ, որ հանգամանօրէն բացատրեց թէ ինչո՞ւ Լոնօրհնէք կը կատարէր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին տարուան առաջին օրուան պատարագին աւարտին: Ան թելադրեց նոան հատիկներուն նման, քովէ քով կենալ եւ միասնական ըլլալ համայնքային գործունէութեան, ինչպէս եւ՝ յօգուտ Հայրենիքի եւ Արցախի տարուելիք աշխատանքներուն մէջ: Լոնօրհնէքը համեմատաբար նոր սովորութիւն է, գոր նախաձեռնած է ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նշան Սարկաւազ նաեւ ներկաներուն փոխանցեց Սրբազան հօր եւ թեմական խորհուրդին շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան առիթներով:

Մէկ ժամ տեւող այս արարողութեան վիտօ-նկարահանումը կատարեց Տիկին Լիաննա Պետրոսեան: Օրը զուգադիպելով Սուրբ Յովհաննէս Մկրտիչի Ծննդեան Տօնին, Նշան Սարկաւազ հակիրճ բացատրութիւն տուաւ այս կարեւոր տօնին մասին, գոր կը յիշատակենք Յունուար ամսու 13-14-ին: Ան շնորհաւորեց բոլոր անոնք որոնք կը կրեն Յովհաննէս, Յովիկ, Յովան, Ճոն, Մկրտիչ, Մկօ անունները: Ան նաեւ յիշատակեց համայնքի զաւակներէն նորոգ հանգուցեալ Ճոն Զօհրապը, որուն յուղարկաւորութեան եւ թաղման կարգը տեղի ունեցան Ուելիսկթընի մէջ 22 Դեկտեմբեր 2022-ին, Անկլիքան ծէսով: Ճոն Զօհրապ, ծագումով Հայ, համայնքի սաղմնաւորման օրերուն իր օգտակարութիւնը բերած է անոր կազմաւորման գործին մէջ: Ան լաւ բարեկամ էր եւ գործակից հոգեւոյս Ադան Արք. Պալիօզեան Առաջնորդ Սրբազան հօր:

Յետ արարողութեան, ներկաները հաւաքուեցան եկեղեցոյ կից սրահը, համտեսեցին օրհնուած նուտերը եւ շնորհաւորեցին Հայկական Ծնունդը:

Յունուար 25-ին Ուելիսկթընի մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս նուիրուած Ճոն Զօհրապին: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն Յակոբ Երլտրզեան, ընկերակցութեամբ ՆԶԻ Հայկական Միութեան վարչութեան անդամ Պրն Տէյլ Քելլիի եւ ՆԶԻ Հայ Դատի Յանձնախումբի անդամ Պրն Արա Գասապեանի մասնակցեցաւ յուշահանդէսին, Հայ համայնքին վերջին յարգանքը մատուցանելու համար հանգուցեալին: Ճոնին յիշատակը անմար պիտի մնայ:

Դ2., 25 Յունուարին Նշան Սարկաւագ Պասմաճեան, Նոր Զելանտայի մէջ Թեմական Խորհուրդի ներկայացուցչի իր հանգամանքով ընդունեց Սիտնիի Մուրթ Յարութիւն եկեղեցւոյ սարկաւագ Պողոս Սրկ. Քելէշեանը: Պարոն Քելէշեան նաեւ «Լոյս» ամսաթերթի խմբագիրն է: Երկու սարկաւագները քննարկեցին «Լոյս» եւ «Փարոս» ամսագրերու բովանդակութեան վերաբերեալ հարցեր:

Պողոս սարկաւագ անձնական այցելութեամբ երկու շաբթուան համար կը գտնուի Նոր Զելանտա:

Կիրակի 29 Յունուարին ցնծութեան մէջ էր Օքլանտի Հայ համայնքը: 1996-ին հիմնադրուած Նոր Զելանտայի Հայկական Միութիւնը տօնեց իր ծննդեան 25-ամեակը: Մի քանի անգամ յետաձգուելով 2021-2022-ին Քովիտի եւ այլ պատճառներով, միութեան վարչութիւնը որոշեց զայն տօնակատարել Յունուար 2023-ին: Ձեռնարկը զուգարկապէս Հայաստանի հանրապետութեան Ճաբոնի, Աւստրալիոյ, Նոր Զելանտայի եւ Հարաւային Քորէայի դեսպան Պրն Արեգ Յովհաննիսեանի Օքլանտ այցելութեան, որպէս հիւր Նոր Զելանտայի Արտգործ Նախարարութեան:



Ձեռնարկը կազմակերպուեցաւ երեկոյեան ժամը 7-ին, Մէտոուտի քաղաքապետարանի տան մէջ, ուր ամիսը անգամ մը Հայ համայնքը կը հաւաքուի, ի ներկայութեան 40-ի շուրջ հայորդուոց: Հանդիսավարութիւնը կատարեցին Պարոն Աշոտ Գրիգորեան եւ Օրիորդ Գայանէ Սարգսեան: Հայաստանի հանրապետութեան քայլերգէն ետք իր սրտի խօսքը արտասանեց Միութեան ատենապետուհի Տիկին Հերմիկ Սուգիասեան, ապա հրաւիրեց Տոքթ Զաւէն Փանոսեանը, որ անգլերէն լեզուով պատմականը կատարեց միութեան 25-ամեայ գործունէութեան: Մէջ ընդ մէջ ելոյթ ունեցաւ Հայկական «Ծիրանի»



նուագախումբը, որ ներկայացուց «Երկու քոյր ենք երկուսս էլ մի բոյի» եւ «Բինգէօլ» երգերը կատարողութեամբ Օրիորդներ Անահիտ եւ Գայանէ Սարգսեանի, Տախսիա եւ Լուիզա Գրիգորեաններու, Նարինէ Գրիգորեանի (դաշնամուր), Արսէն Սարգսեանի (Քլարինէթ): Տախսիա Գրիգորեան մասնակցեցաւ նաեւ ջութակով: Ներկայացուեցաւ 25-ամեայ գործունէութեան տեսանիւթ մը պատրաստուած Տիկին Նարինէ Գրիգորեանի կողմէ:

Վարչութիւնը գեղեցիկ գաղափար մը յղացած էր փայտեայ խաչքարներով պարգեւատրելու

միութեան բոլոր անդամները, առ ի գնահատանք իրենց կատարած զոհողութեանց: Խաչքարները պատրաստուած են Հայաստանի մէջ, որոնք, յատուկ արարողութեամբ, օրնուած են Ս. Էջմիածնի մէջ: Նախքան նուերներու բաշխումը, ցոյց տրուեցաւ օրհնութեան տեսանիւթը:

Նշան Սարկաւագ Պասմաճեան ներկայացուց Պրն Դեսպանին կենսագրութիւնը եւ զինք հրաւիրեց արտասանելու իր սրտի խօսքը: Պրն Յովհաննիսեան, իրեն վայել յատուկ հիմունքով, «շնորհակալութիւն» յայտնեց Քովիտին, որուն պատճառով էր որ ինք բախտը ունեցաւ մասնակցելու այս կարեւոր միջոցառումին՝ 25-ամեակին, եւ ի սրտէ շնորհաւորեց հիմնադիրները, անցեալի եւ այժմու վարչութիւնները եւ Նոր Զելանտայի Հայ համայնքը: «Ուրախ եմ որ այստեղ եմ շրջապատուած սրտցաւ, մտաւորական, որակաւոր համայնքի մը զաւակներով»: Պարոն դեսպանը իր պատրաստակամութիւնը յայտնեց համայնքին հետ քննարկելու թէ ինչ կրնար Հայաստանը տալ այս համայնքին յօգուտ անոր ինքնութեան ամրապնդման: Անդրադառնալով Սփիւռքի եւ հայութեան, Պրն դեսպանը ըսաւ. «Մեզի պէտք է զօրաւոր եւ միասնական սփիւռք, ուժեղ պէտք է պահել մեր հիմնական մերձաբնակները երկու



գաղութները՝ Լիբանանն ու Սուրիան»։ Միս կողմեն, Պարոն Դեսպանը ըսաւ «Այսօր օրհասական վիճակի մէջ ենք, Արցախը կը մաքառի եւ ես վստահ եմ որ ան պիտի գոյատեւէ եւ պիտի դառնայ ուժեղ եւ հզօր։ Հարկ է Հայը պահելով Արցախը պահել Հայկական։ Հարկ է Հայաստանի սահմանները ամրապնդել։ Այս բոլորը տեղի կ'ունենան երբ համախմբուինք։ Կը յաղթանակենք երբ ունինք հաւատք, բարգաւաճ տնտեսութիւն եւ ուժ» եզրափակեց Պրն Յովհաննիսեան եւ յատուկ յուշանուէր մը յանձնեց Միութեան ատենապետուհիին։



Պաշտօնական յայտագրի փակումէն ետք տեղի ունեցաւ ճաշկերոյթ-ընթրիք, որուն ընթացքին մտերմիկ խօսակցութիւն տեղի ունեցաւ Պրն Դեսպանին հետ։

Յետ խորհրդակցութեանց, **31 Յունուարին**, Հայկական Միութեան եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ վարչութեանց անդամները, մասնակցութեամբ մի քանի հրաւիրեալներու, հանդիպում մը ունեցան Պրն դեսպանին հետ կարծիքներու փոխանակման համար (brain storming), դէմ առ դէմ եւ առցանց։ Օգտաշատ այս հանդիպման քննարկուեցան Սփիւռքը եւ Նոր Զելանտայի գաղութը, Հայրենիքն ու Արցախը յուզող զանազան հարցեր։

Փարոսի խմբագրութիւնը ի սրտէ կը շնորհաւորէ Նոր Զելանտայի Հայկական Միութեան 25-ամեայ յոբելեանը եւ կը մաղթէ նորանոր յաջողութիւններ։

ՀՀԲԿ-ի Լուրեր

Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոն

Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի (ՀՀԲԿ) 2023-ի գործունէութիւնը վերակսաւ 9 Յունուարին։ Չացուտի մեր կեդրոնին մէջ, շաբաթը չորս օրուան դրութեամբ, ընդունեցինք մեր բոլորին հարազատ դէմքերը ընկերային մեր հաւաքներուն։ Այս տարի մարզանքի դասապահեր կազմակերպած ենք, որոնց համար հրաւիրած ենք արհեստավարժ ուսուցողներ, մասնագիտացած մեծահասակներու մարմնամարզի բնագաւառին մէջ։ Կը ծրագրենք շրջապտոյտներ եւ ընդհանուր գիտելիքներու հաւաքներ։

Ուրախ ենք յայտնելու որ Առողջապահութեան նախարարութիւնը երկարաձգեց ՀՀԲԿ-ի ծրագիրներուն համար նպաստի տուուչութիւնը մինչեւ 2024 Յունիսի աւարտ։ Նախարարութիւնը յաւելեալ նպաստ տրամադրեց Կեդրոնին Flexible Respite-ի, երթելեկի եւ կերակուրներու համար, որ կը գումարուի ընթացիկ աշխատանքներուն համար տրուած նպաստին վրայ։ Ընթացիկ այդ աշխատանքներն են Social Support Group, Social Support Individual, Centre Based Respite եւ Domestic Assistance services:

Երկու շաբաթ առաջ, Կեդրոնիս աշխատանքները համադրող Երեցկին Յասմիկ Ղամպարեան-Համբարձումեան այցելեց Երեւանի «Արեւ Երեխաներ» Ոչ Կառավարական Հաստատութեան Կեդրոնական գրասենեակը։ Երեցկինը հանդիպում ունեցաւ կեդրոնին հիմնադիր անդամ Հայր Գրիգոր Գրիգորեանին հետ։ Հայր Սուրբը մանրամասն բացատրութիւն տուաւ Կեդրոնի բազմաբնոյթ աշխատանքներուն եւ կիրարկուած մեթոտներուն մասին ի սպաս «Արեւ Երեխաներ»-ու աշակերտներուն։ Ան նաեւ զաղափար տուաւ 2022-ի Կեդրոնի նուաճումներուն ինչպէս նաեւ ապագայ ծրագիրներուն մասին։



Զեփիւռ Սուրբատեան



ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՅՅԵԼԵՑ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԷՈՆ

Յունուար 1-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոսաց դասին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններուն հետ այցելեց «Եռաբլուր» զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախութեան եւ պաշտպանութեան համար իրենց կեանքը ընծայաբերած հայորդիներու յիշատակին:

Վեհափառ Հայրապետը եւ հոգեւորականաց դաս աղօթք բարձրացուցին առ Աստուած նահատակ քաջորդիներու հոգիներու խաղաղութեան համար: Նորին Սրբութիւնն ու եկեղեցականները առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զաւակներու շիրիմները՝ բերելով իրենց խոնարհումն ու աղօթքը:



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀՈՈՍԻ ՊԱՏՈՒԱԻՈՐ ՊԱՊ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ 16-Ի ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Յունուարի 5-ին, Վեհափառին օրհնութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատուիրակութիւնը կը մասնակցի Դեկտեմբեր 31, 2022-ին վախճանած Հռոմի պատուաւոր պապ Էրջանկայիշատակ Բենեդիկտոս 16-ի յուղարկաւորութեան: Պատուիրակութեան կազմին մէջ են Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ եւ Վատիկանի մօտ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը, Տաւուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանը եւ Կեդրոնական Եւրոպայի ու Շուէտի հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Տիրան եպիսկոպոս Պետրոսեանը:



ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔԻՆ ՄԷԶ

Յունուար 5-ին հանդիսապետութեամբ Վեհափառ հօր, Սուրբ Գայանէ-ի մէջ մատուցուեցաւ Ճրագալոյցի Սուրբ Պատարագ, որուն մասնակցեցան Մայր Աթոռի միաբանները եւ ուխտաւոր հայորդիներ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային հարցերու գրասենեակի տնօրէն Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեան: Մայր Աթոռի չորս միաբան սարկաւազներ ընթերցեցին Դանիէլի մարգարէութիւնը:

Սրբազան հայրը անդրադարձաւ մարդ-Աստուած յարաբերութեան. «Թէւ չենք բացառեր մարգարեներու, Սուրբ Գրքի մեկնիչներու, աստուածաբաններու կարեւորութիւնը՝ Աստուծոյ խօսքը մեզ աւելի դիրին մատուցելու առումով, բայց այսօր կարեւոր է իւրաքանչիւրիս անհատական հաղորդակցութիւն Աստուծոյ հետ» բացատրեց Սրբազանը:

Անդրադառնալով մեր երկրին առջեւ ծառայած մարտահրաւերներուն, ան ընդգծեց, որ առկայ փորձութիւնները հնարաւոր է յաղթահարել հաւատքի, աղօթքի ու նուիրական գործերու շնորհիւ:

Պատարագի աւարտին, նախաստօնակի արարողութեան ընթացքին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացաւ Սուրբ Խորան եւ վառեց կենսաստու մումը, ուրկէ Յիսուս Քրիստոսը խորհրդանշող լոյսը բաշխուեցաւ հաւատացեալներուն:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանութիւնը հաւաքուեցաւ Վեհարան, ուր, տեղի ունեցաւ տարուան առաջին Տնօրինէքը:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Յունուար 6-ին, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածյայտութեան հոգնորոգ տօնին



առիթով՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ:

Հայրապետական խաչվառագարդ թափօրը «Խորհուրդ խորին» շարականի հանդիսաւոր երգեցողութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Տրդատի մատուռէն առաջնորդեց դէպի խորան: Սուրբ Պատարագին

որպէս առնչութեականեր սպասաւորեցին Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բարայեանը եւ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Գերաշնորհ Տ. Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեանը:

Սուրբ Պատարագի ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» կենարար աւետիսով ողջունեց աշխարհասփիւռ հայութիւնը եւ յղեց իր պատգամը:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՍԸ
ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՄԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

(Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 6 Յունուար, 2023 թ.)



Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Նորոգուեցէք ձեր մտքով եւ հոգով ու հազէք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու» (Եփ. 4.23-24)

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս,

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի հրաշագարդ այս օրը, համախմբուած մեր եկեղեցիներում, օրհնաբանում ենք նորածին Փրկչին՝ միմեանց փոխանցելով փրկաւետ ողջոյնը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Աւելի քան երկու հազար տարի Քրիստոսի Սուրբ Ծննդեան աւետիսը հնչում է աշխարհում, արձագանքում մարդկանց հոգիներում որպէս անզուգական հրաւեր՝ Քրիստոսով նորոգուելու, խաղաղութիւն հաստատելու, սէրն առատացնելու: «Նորոգուեցէք ձեր մտքով եւ հոգով ու հազէք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու», - պատգամում է առաքելը՝ ներշնչուած Տիրոջ Սուրբ Ծննդեան աւետիսով: Արդարեւ, Աստուածորդին աշխարհ եկաւ՝ մեղանչական մարդուն ցոյց տալու փրկութեան ճանապարհը, որը բացում է Քրիստոսով նորոգուածների համար: Այս ուղիով են ընթանում Փրկչին հաւատացող ու փորձութիւնների առջեւ չընկրկող հոգիները եւ մեղքի ու չարեաց դէմ աներկբայ մարտնչողները:

Քրիստոսի Սուրբ Ծննդեան շնորհները պարզեւում են մարդկութեանը օրհնեալ կեանք՝ խարսխուած աստուածպաշտութեան, բարութեան, ճշմարտութեան ու արդարութեան վրայ, յոյսով ու լաւատեսութեամբ են զինում կորուստներից ու ցաւերից վշտահար ու յուսաբեկ հոգիներին, ապաքինում եւ լիացնում բարուց ու սիրուց ամայացած սրտերը եւ զօրացնում դժուարութիւններին դիմակայելու, անգամ անվճռելի թուացող ճգնաժամերն ու պատուհասները յաղթահարելու:

Փրկչի Ծննդեամբ մարդկութեան կեանքում հնչող նորոգութեան հրաւերի անտեսումը, Աստուածորդու պատուիրաններին հակառակ ընթացքները, սակայն, չարիք ու ակեղ եւ սփռում եւ այսօր էլ պատճառ են դառնում հասարակութեան մէջ, ընտանիքներում գժտութիւնների ու անհանդուրժողութեան, ազգերի ու պետութիւնների միջեւ հակամարտութեան ու թշնամանքի: Յիրաւի, առաքելի խօսքի համաձայն, «մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի միջոցով» (Հռ. 6.23):

Միրելիներ, Աստուածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդը առանձնակի քաջալերութեամբ է համակում, հաւատքով գօտեպնդում Քրիստոսասէր մեր ժողովրդին, որ վերջին տարիներին ենթարկուեց նոր փորձութիւնների: Արցախեան պատերազմի եւ ամիսներ առաջ Հայաստանի դէմ Ադրբեջանի կողմից սանձազերծուած ռազմական գործողութիւնների արհաւիրքներում մենք վերստին կրեցինք ծանր կորուստների ցաւն ու տառապանքը: Մեր զաւակները հերոսաբար զոհուեցին յանուն հայրենիքի, հազարաւորները հաշմանդամ դարձան: Մեր տասնեակ զաւակներ գերութեան մէջ են, տակաւին կան անյայտ կորածներ: Տեւական ժամանակ արգելափակուած է Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհը, ինչը յանգեցրել է հումանիտար աղէտի: Այս ծանր իրավիճակում մեր դէմ ծառայած հիմնախնդիրները յաղթահարելու համար մենք կարիքն ունենք ճշմարիտ նորոգութեան, սրտով, հոգով, մտքով մաքրուելու, Քրիստոսով վերափոխուելու եւ միախորհուրդ ու միակամ դառնալու ազգի եւ

հայրենիքի առջև մեր յանձնառությունների մէջ: Այսպիսի նորոգութեամբ է, որ կարող կլինենք հայրենական մեր կեանքից բացառել ամենայն չարն ու անարդարը, վախի, բռնութեան, ատելութեան ու յարմարունականութեան կործանարար դրսեւորումները եւ հայրենիքի բարուք սպազայի տեսլականով համախմբել ազգային ողջ ներուժը, ամրագրել միմեանց հանդէպ յարգանքն ու սէրը, վստահութեան հաստատուն հիմքերի վրայ խարսխել Հայաստան-սփիւռք գործակցութիւնը: Պատմական փորձառութեամբ գիտենք, որ ներդրութիւններից յաղթանակած ենք դուրս եկել, երբ եղել ենք միաբանուած ընդհանրական նպատակների շուրջ: Քրիստոսով նորոգուած, Քրիստոսով միասնական, Աստծոյ շաւիղներով քայլելով, մենք, ինչպէս առաքելալն է ասում, մեզ պաշարած փորձութիւններից այսօր էլ յաղթական պիտի դուրս գանք (հմմտ. Հռ. 8.37):

Միբելի զաւակներ Մեր, Աստծոյ օգնականութիւնը խնդրելով՝ ամուր մնանք առ Փրկիչ մեր Տէրը հաւատքի մէջ եւ աներկմիտ սրտով պահպանենք մեզանում Սուրբ Ծննդեան յուսաբեր տօնի հոգեւոր ապրումը: Զօրանանք հայրենիքի սիրով եւ ամեն կարելի հնարաւորութեամբ սատարենք Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում դժուարութիւններ կրող մեր քոյրերին ու եղբայրներին: Գիտակցենք, որ պատասխանատու ենք հայրենիքի ու սերունդների առջև եւ վտանգի չենթարկենք մեր անկախ պետականութիւնը: Մեր բարի գործերը դարձնենք հիմերը մեր վերելքի ու յաղթութեան եւ միասնաբար կերտենք մեր հայրենիքի ու ժողովրդի ապահով, լուսաւոր գալիքը:

Սուրբ Ծննդեան Պատարագի այս սրբազան պահին Հայրապետական Մեր խօսքն ենք յղում խորհիտ ու անվեհեր Արցախի հաւատաւոր Մեր զաւակներին: Միբելի արցախցիներ, մեր ժողովրդի մտածումներն ու հայեացքները այս օրերին առաւելաբար ձեզ են ուղղուած: Դուք, որ դժուարութիւնների առջև երբեք չէք ընկրկել ու չէք նահանջել, այսօր էլ տոկունութեամբ շարունակում էք հերոսաբար պայքարել յանուն ձեր ազատ ու անկախ կեանքի, յանուն պատմական արդարութեան վերականգնման: Ձեր քաջ նախնեաց փառաւոր օրինակով հաստատուն ու աննկուն մնացէք հայրենի հողում ապրելու եւ արարելու վճռականութեան մէջ: Մեր Սուրբ Եկեղեցին աշխարհասփիւռ իր թեմերով ձեզ հետ է, աջակից ու զօրակից ձեզ: Ձեր հիմնարար իրաւունքների պաշտպանութեան արդար պահանջը յաղթանակելու է համայն հայութեան ջանքերով եւ միջազգային հանրութեան սատարումով: Հաւատում ենք, որ Աստծոյ ողորմածութեամբ մեր ժողովուրդը իրեն պատած խաւարի մէջ պիտի լոյս ծագեցնի եւ դիմագրաւի իր կեանքում ծառացած լրջագոյն մարտահրաւերներին:

Այս զգացումներով ու մտածումներով, Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մահակ արքեպիսկոպոս Մաշալեանին՝ մաղթելով Աստծոյ զօրակցութիւնը տերունաւանդ ծառայութեան մէջ: Ի Քրիստոս եղբայրական սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մանկացեալ Փրկչի օրհնութիւնը իրենց աստուածապատուէր առաքելութեանը եւ հաւատաւոր հօտին: Հայրապետական Մեր սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հաւատաւոր Մեր ժողովրդին ի հայրենիս, յԱրցախ եւ ի սփիւռս:

Սուրբ Ծննդեան այս շնորհագարդ առաւօտ սրտագին աղօթքով խնդրում ենք Ամենակալ Տիրոջը, որ բերթեհեմեան աստղալոյսը յարատեւ շողարձակի մեր ազգային կեանքի երկնականարում, որպէսզի մենք, Փրկչին ապաւինած, հաստատենք մեր ընթացքը սիրոյ, համերաշխութեան ու միասնականութեան շաւիղներում: Թող Սուրբ Ծննդեան կենարար խորհրդով խաղաղութիւն լինի աշխարհին ու համայն մարդկութեանը: Թող հաւատքով պայծառացած՝ աշխարհասփիւռ ազգս հայոց զօրացնի իր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, իրականութիւն դարձնի իր նուիրական իղձերը եւ փառաւորի մարդեղացեալ Փրկչին՝ զոհութեամբ ձայնելով:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
ձեզ և մեզ մեծ աւետիս

Յուարտ Սուրբ Պատարագի՝ կատարուեցաւ Ջրօրինէք, որու ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ Սրբալոյս Միւռնոսով օրհնեց ջուրը: Խաչի այս տարուան կնքահայրն է ժնեւահայ բարերար Յակոբ Աւագեանը:

Ջրօրինէքի արարողութեան աւարտին Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնութիւնն ու Սուրբ Ծննդեան փրկարար աւետիսը փոխանցեց ներկայ հաւատաւոր ժողովուրդին:



նպաստ տարուած աշխատանքային մեծ աւանդին համար:

Արարողութեան ներկայ էին Գերագոյն հոգեւոր խորհուրդի անդամներ, հայաստանեան թեմերու առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ տարբեր կառոյցներու ղեկավարներ:



նպաստ տարուած աշխատանքային մեծ աւանդին համար: Մեր ժողովուրդներու եղբայրութիւնը ամրօրէն հաստատուած է քրիստոնէական մեր հաւատքի ու դաւանած ընդհանուր արժէքներու վրայ»:

Նորին Սրբութիւնը հայ ժողովուրդի նկատմամբ բարեացակամ վերաբերմունքին եւ զօրակցութեան վկայութիւն նկատեց Ռուսաստանի, եւ անձամբ նախագահ Փութինի անմիջական ջանքերը 44-օրեայ արցախեան պատերազմի դադարեցման ի նպաստ, ինչպէս նաեւ շարունակուող աջակցութիւն ուղղուած պատերազմի աղէտալի հետեւանքներուն յաղթահարման, արցախահայութեան անվտանգութեան ապահովման, Դադիվանքի ու հայոց հնամենի սրբավայրերու պահպանութեանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՈՅ ՇՔԱՆՇԱՆԸ

Յունուար 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնուեցաւ Ռուսաստանի Դաշնութեան Պատուոյ շքանշանը: Վեհափառ Հայրապետը պետական պարգևի արժանացած է ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինի հրամանագրով՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ մշակութային-մարդասիրական կապերու զարգացման ի

Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկին ընթերցեց նախագահ Փութինի հրամանագիրը, ապա Նորին Սրբութեանը յանձնեց ՌԴ Պատուոյ շքանշանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետը իր օրհնութիւնն ու պատգամը փոխանցեց ներկաներուն: Հայոց Հովուապետը, ի դէմս ՌԴ դեսպանին, շնորհակալութիւն յայտնեց նախագահ Փութինի ազնիւ ուշադրութեան եւ գնահատանքին համար, ի մասնաւոր ընդգծեց. «Մեր ժողովուրդները ունին դարաւոր բարեկամութեան հարուստ պատմութիւն, որը կոփուած ու թրծուած է համատեղ կրած նեղութիւններով ու

Անդրադառնալով մերօրեայ մարտահրաւրներուն՝ Հայոց Հայրապետը արձանագրեց. «Ամենքիս հոգիներն այս օրերին անհանգիստ են Լաչինի միջանցքի արգելափակման պատճառով Արցախում ստեղծուած հումանիտար ճգնաժամով: Աղօթում ենք, որ արդիւնաւորուեն ռուս խաղաղապահների ջանքերը՝ ուղղուած Լաչինի միջանցքի արգելափակման վերացմանը եւ Արցախում տիրող աղէտալի վիճակի յաղթահարմանը: Թող Ամենակալի օգնականութեամբ մեր տարածաշրջանը վերագտնի իր խաղաղութիւնը, վերականգնուի Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը եւ միջազգային հանրութեան կողմից ճանաչուի Արցախի մեր ժողովրդի՝ հայրենի հողում ապահով, ազատ ու անկախ ապրելու իրաւունքը»:

Նորին Սրբութիւնը հաստատեց, որ երկու ժողովուրդներու բարեկամութեան ակունքներուն կանգնած Հայաստանեայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիները իրենց Հովուապետերու առաջնորդութեամբ ամենայն ջանք ի գործ պէտք է դնեն այս դարաւոր բարեկամութեան առաւել ամրապնդման եւ յարատեւութեան:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՄԵՔՍԻՔՕ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**



Յունուար 19-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց Մեքսիկա-Հայաստան բարեկամական խումբի պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ խումբի ղեկավար Բերենիսէ Խուարես Նաւառատէի:

Հանդիպման ներկայ էր նաեւ Մեքսիքոյի ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէլլայ Շաքարեանը եւ ՀՀ-ի Մեքսիքոյի պատուաւոր հիւպատոս Նիկոլայ Կոստանդեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը յոյս յայտնեց, որ պատուիրակութեան այցը Հայաստան առաւել կը խորացնէ երկու երկիրներու բարեկամական յարաբերութիւնները: Վերլիշելով հայրապետա-

կան իր այցը Մեքսիքո՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գոհունակութիւնը արտայայտեց Հայ համայնքին նկատմամբ Մեքսիքական իշխանութիւններու հոգատար վերաբերմունքին համար:

Անդրադառնալով տարածաշրջանի ծանր իրավիճակին եւ Ադրբեջանի կողմէն Լաչինի միջանցքին արգելափակման՝ Վեհափառը կարեւոր նկատեց միջազգային հանրութեան հետեւողական գործուն քայլերը միջանցքի վերաբացման ուղղութեամբ:

Բերենիսէ Խուարես Նաւառատէ կարեւորեց ջանքերու գործադրումը յօգուտ խաղաղութեան հաստատման եւ ապահով կեանքի իրաւունքի պաշտպանութեան:



**Ի ՏԵՐ ՆԱԶԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅԿ ՏԻՏԻԶԵԱՆԸ**

Մայր Աթոռը հրապարակեց հետևեալ Մահազդը.

«Խորը ցաւով տեղեկացնում ենք, որ ի Տէր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեծանուն բարերար, «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձր շքանշանակիր, «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոսակիր, նուիրեալ հայորդի տիար Հայկ Տիտիզեանը:

Լուսահոգի Հայկ Տիտիզեանը, որպէս ազգասէր ու եկեղեցանուէր հայորդի, մեծ նախանձախնդրութեամբ մշտապէս իր զօրակցութիւնն է բերել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառութեանն ու շինութեանը, աջակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգօգուտ, եկեղեցանուէր նախաձեռնութիւնների իրականացմանը: Տիտիզեան բարեպաշտ ընտանիքը մեծապէս աջակցել է Հայ Եկեղեցու բարեսիրական տարբեր ծրագրերի իրականացմանը, սատարել հոգեւորականաց պատրաստութեանն ու հայապահպանութեանն ուղղուած առաքելութեանը, ինչի խօսուն վկայութիւնն է Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա-ի անուան կրթական կենտրոնի եւ ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի Սուրբ Ներսէս Ընծայարանի նոր համալիրի կառուցումը:

Հոգեւոյս Հայկ Տիտիզեանը տարբեր բարեգործութիւններով իր զօրակցութիւնն է բերել Հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին: Կարեւոր ներդրում է ունեցել համավարակի շրջանում Մայր Աթոռի սոցիալական ծրագրերի իրականացման գործում, ինչպէս եւ մեծապէս օժանդակել Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հիմնանորոգութեանը:

Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնն իրենց խոր վշտակցութիւնն ու զօրակցութիւնն են յայտնում Տիտիզեան սգակիր ընտանիքին եւ աղօթում հոգեւոյս Հայկ Տիտիզեանի հոգու խաղաղութեան եւ հանգստութեան համար:

Խունկ, աղօթք եւ օրհնութիւն ննջեցեալի բարի յիշատակին»:

**ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԻՐԱԻԱՄՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՔՆԱՐԿԵՑ
ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԵՒ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆԵԼԻՔՆԵՐԸ**



Յունուարի 19-ին Վեհափառ Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ Մայր Աթոռի իրաւախորհրդատուական յանձնախմբին նիստը: Նիստին քննարկուեցան Արցախի շրջափակման պայմաններուն մէջ Եկեղեցոյ կողմէ իրականացուող քայլերը, ինչպէս նաեւ առաջիկայ ընելիքներու հետ կապուած հարցեր: Զեկուցեց Դիւանապետ Գերաշնորհ Տ.Արշակ Եպս Խաչատրեան, արձանագրելով, որ Դեկտեմբերի 12-էն ի վեր Արցախը Հայաստանի հետ կապող Բերձորի (Լաչինի) միակ ճանապարհին արգելափակման հետեւանքով արցախահայութիւնը կը շարունակէ գտնուիլ մարդասիրական աղետալի իրավիճակի մէջ:

Ներկայացուեցան ճգնաժամային նման իրավիճակին մէջ Վեհափառ Հայրապետին եւ Մայր Աթոռի կողմէն իրականացուած աշխատանքները, մասնաւորապէս անդրադարձ կատարուեցաւ այն հանգամանքին, որ դեռեւս Դեկտեմբեր 14-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը յիշեալ հարցին վերաբերեալ շարք մը գրութիւններով դիմած էր Քոյր Եկեղեցիներու պետերուն եւ միջազգային կառոյցներուն, որպէսզի իրենց աջակցութիւնը բերեն արցախահայութեան: Ի պատասխան Նորին Սրբութեան կոչին, արձագանքած են Ռուս Եկեղեցոյ Պետը, Հռոմի Սրբազան Քահանայապետը, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի, Եւրոպական Եկեղեցիներու Խորհուրդի եւ Մակ-ի գլխաւոր քարտուղարները:

Միաժամանակ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցած պետական, քաղաքական, միջազգային եւ դիւանագիտական տարբեր կառոյցներու ներկայացուցիչներու հետ: Նորին Սրբութեան կողմէ շրջաբերական գրութիւն ուղղուած է նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր թեմերու Առաջնորդներուն, առ այն, որ թեմական, համայնքային, ազգային կառոյցներու ջանքերու համադրմամբ Արցախի հարցը բարձրացուի ու ներկայացուի պետական, միջազգային, դիւանագիտական ու մարդասիրական պատկան կառոյցներու առջեւ:

Ջեկոյցի աւարտին տեղի ունեցաւ մտքերու փոխանակում, ներկայացուեցան առաջարկներ, որոնք կեանքի կը կոչուին յառաջիկային: Առանձնայատուկ կերպով ընդգծուեցաւ արցախահայերը սնունդով եւ անհրաժեշտ պիտոյքներով մատակարարելու կարեւորութիւնը:

Աւարտին, Վեհափառը համապատասխան յանձնարարականներ ուղղեց Մայր Աթոռի պատկան կառոյցներու ղեկավարներուն՝ արձանագրելով, որ Հայոց Եկեղեցին հնարաւոր բոլոր ջանքերը շարունակելու է գործադրել մարդասիրական ճգնաժամը յաղթահարելու եւ պաշտպանելու արցախահայութեան հայրենի հողին վրայ ազատ ու անկախ ապրելու իրաւունքը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՈՐԴԵԱՑ ՏՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Յունուար 26-ին Վեհափառը ընդունեց Մայր Աթոռի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) հովանիին ներքոյ գործող Հայորդեաց Տների տնօրէններն ու փոխտնօրէնները:

Անդրադառնալով Հայորդեաց Տների 30-ամեայ գործունէութեան՝ Նորին Սրբութիւնը գոհունակութեամբ արձանագրեց, որ բազմաթիւ հայորդիներ բացայայտած ու զօրացուցած են իրենց տաղանդներն ու շնորհները՝ յետագային զանոնք ծառայեցնելով Հայրենիքի ու Եկեղեցւոյ շէնացման:

Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց նաեւ հայորդիներու մեջ քրիստոնէական կրթութեան ու դաստիարակութեան շնորհիւ աստուածասիրութեան եւ հայրենասիրութեան ոգիի կերտումը:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ (28 Յունուար 2023)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրուայ առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքն ենք բերում Հայոց բանակի սպաներին ու զինուորներին եւ համայն մեր ժողովրդին:

Հայոց բանակը կազմաւորուեց մեր անկախութեան վերահաստատման տարիներին, դարձաւ պատուարն ու պահապանը հայոց վերածնեալ պետականութեան, երաշխաւորը մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կեանքի: Մեր խիզախ զօրավարների ու զինուորների քաջագործութիւններով, նաեւ բանակին սատարող մեր ժողովրդի պայքարով ազատագրուեց Արցախ աշխարհը, եւ արցախահայութիւնը իր անկախ կեանքը կառուցելու հնարաւորութիւնն ունեցաւ:

Արցախեան 44-օրեայ աղէտալի պատերազմը, անցեալ տարուայ սեպտեմբերին Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգութիւնները, յառնած մարտահրաւերները եւ պաշտպանական լրջագոյն հիմնահարցերը նոր հրամայականների առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին: Այս ծանր իրավիճակում առաջնային եւ հրատապ է բանակի արդիականացումը՝ ժամանակի չափանիշներին ու պահանջներին համապատասխան: Առաջնային եւ հրատապ է ազգային ողջ ներուժի համախմբումը,

որպեսզի Հայոց բանակը շուտափոյոթ յաղթահարի պատերազմի պատճառած աղետալի հետեւանքները, ամբողջ գտնեն անդառնալի կորուստների վերքերն ու ցաւերը, եւ բացառուեն այնպիսի նորերգութիւններ, որ ապրեցինք շաբաթներ առաջ: Հաւատում ենք, որ Հայոց բանակը պիտի վերագտնի փառքի իր ճանապարհը եւ կարող լինի աննկուն ու յաղթական իրագործել իր սրբազան առաքելութիւնը: Ի խորոց սրտի աղօթում ենք հայրենիքի պաշտպանութեան համար նահատակութեան պսակն ընդունած բոլոր քաջորդիների համար: Հայցում ենք Երկնաւորից, որ մխիթարութիւն պարգևի կորուստներից ու վշտերից բեկուած հոգիներին: Թող Ամենակալն Աստուած Իր պահպանութիւնն ու զօրակցութիւնը շնորհի Հայոց բանակի քաջարի զինուորներին ու հրամանատարական կազմին, խաղաղութիւն ու բարօրութիւն՝ Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին եւ աշխարհասփիւռ մեր ժողովրդին: «Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տէառնէ Յիսուսէ Քրիստոսէ» (Հռով. 1.7) այսօր եւ միշտ. ամէն:



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԱՅՑ ԵՌԱԲԼՈՒՐ

Յունուարի 28-ին՝ Հայոց բանակի օրուան առիթով, Մայր Աթոռի մէջ կատարուեցաւ Հանրապետական մաղթանք, այնուհետեւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւոր դասի ուղեկցութեամբ այցելեց Եռաբլուրի զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու յանուն հայրենիքի պաշտպանութեան նահատակուած քաջորդիներու: Նորին Սրբութիւնն ու եկեղեցականները առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս գաւակներու շիրիմներուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Յունուար 29-ին Վեհափառ հայրապետը, հայրապետական կարճատեւ այցով մեկնեցաւ Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իրլանտայի հայոց թեմ: Նորին Սրբութեան կ'ուղեկցի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կեդրոնի եւ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի տնօրէն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումեանը:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Յունուարի 29-ին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանէ վանքում մատուցուեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր ՀՀ Զու հոգեւոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Սովսէս վարդապետ Սարգսեանը: Սրբազան արարողութեանը ներկայ էին ՀՀ Զու գլխաւոր շտաբի պետ, գէներալ-մայոր Էդվարդ Ասրեանը, ՀՀ Զու բարձրագոյն սպայական կազմի ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ Զու Հոգեւոր Առաջնորդութեան գնդերեցներ:





Սուրբ Պատարագի ընթացքում Մովսէս վարդապետնր, խօսելով մեր կեանքում առկայ դժուարութիւնների ու փորձութիւնների մասին, ընդգծեց, որ Տէրը մեզ պատգամում է՝ «Մի՛ վախեցեք» (Հովհ. 6:20), քանզի վախը յաղթահարելով, ապագայի յոյսով, հաւատով ու ապաշխարութեամբ կը կարողանանք հասնել փրկութեան նաւահանգիստ:

Անդրադառնալով օրուայ խորհրդին՝ պատարագիչ Հայր Սուրբը մասնատրաբար նշեց. «Հայոց անկախ պետականութեան մէջ պատերազմների

արհաւիրքներով, մեծագոյն փորձութիւններով, կորուստների ու ձեռքբերումների բովով անցած Հայոց Բանակն այսօր տօնում է կազմաւորման 31-ամեակը: Բոլորս վստահ գիտակցում ենք, որ մեր պետականութեան, անկախութեան, անվտանգութեան գլխաւոր երաշխիքն ու յենարանը Հայոց Բանակն է»:

Վերջում Հայր Մովսէսը աղօթք բարձրացրեց առ Աստուած, որպէսզի Տէրն ուժ եւ իմաստութիւն պարգևի Հայոց Բանակի իւրաքանչիւր զինձառայողի՝ ականջալուր լինելու աստուածային «Մի՛ վախեցիք» կոչին, պայքարի ոգով լցուելու, վճռական եռանդով գործելու, քաջութեամբ յաղթահարելու փոթորիկներն ու դժուարութիւնները՝ յանուն վաղուայ յաղթանակների:

Սուրբ Պատարագի աւարտին, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեց հոգեհանգստեան կարգ հայրենեաց պաշտպանութեան մարտերում զոհուած քաջարի հայորդիների հոգիների խաղաղութեան ու հանգստութեան համար:

Ապա «Էօրնեկէան» հանրակրթական դպրոցի սրահում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բանակի օրուայ կապակցութեամբ ի դէմս ներկաների իր օրհնութիւնը փոխանցեց ՀՀ Զու բարձրագոյն սպայակազմին, զինուորներին եւ գնդերեցներին:

Նորին Սրբութիւնն ի մասնաւորի անդրադարձ կատարեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառայած անվտանգային մարտահրաւերներին, պատերազմի աղէտալի հետեւանքներին եւ դրանց յաղթահարման ու դիմագրաւման գործում Հայոց բանակի կարեւոր առաքելութեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր օրհնութիւնը, գնահատանքն ու սերը փոխանցեց Հայոց բանակի հրամանատարներին եւ զինուորներին՝ մաղթելով Աստծոյ օգնականութիւնն ու պահպանութիւնը, քաջառողջ կեանք եւ արդիւնաշատ առաքելութիւն ի շինութիւն Հայրենիքի եւ մեր ազգի բարօր կեանքի:

Զինուորականութեան անունից ՀՀ Զու գլխաւոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրեանը շնորհակալութիւն յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ՀՀ Զու նկատմամբ դրսեւորուող մշտական հոգածութեան եւ ուշադրութեան համար՝ հաւաստիացնելով, որ ՀՀ Զու սպայական կազմը պատրաստակամ է շարունակելու իր առաքելութիւնը Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան եւ անվտանգութեան խնդիրների լուծման գործում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱԽԱԿՑԱԳԻՐ ՅՂԵՑ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Յունուար 30-ին Վեհափառ Հայրապետը ցաւակցական նամակ յղեց Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Իպրահիմ Ռաիսիին՝ Իրանի Խոյ քաղաքին մէջ տեղի ունեցած աղէտալի երկրաշարժին առիթով:

«Խոր ցաւով տեղեկացանք Իրանի Խոյ քաղաքում տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի մասին, որի հետեւանքով կան աւերուածութիւններ, մարդկային զոհեր եւ վիրաւորներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ցաւակցութիւնն ու աղօթական զօրակցութիւնն ենք բերում Ձեզ, Իրանի Իսլամական Հանրապետութեան կառավարութեանը եւ Իրանի համայն ժողովրդին», – նշած է Վեհափառ Հայրապետը իր ցաւակցագրին մէջ:

DIOCESAN NEWS

Sunday 1 January - It is an Armenian tradition to commence the new year in prayer, giving glory to God for the past year, and seeking good fortune for the year ahead. New year services were held in the three Parishes of the Diocese in Australia and also in New Zealand, where the new year and Christmas service took place on 15 January (details are in Parish News).



The Primate His Eminence Archbishop Haigazoun Najarian celebrated Holy Mass in the Diocese's Mother Holy Resurrection Church and conducted the traditional blessing of pomegranate service, delivering the homily; referring to the reading from the book of Ecclesiastes chapter 3, "*There is a time for everything,*" "Today it is the first day of 2023 and I am pleased that you have come to the church to raise prayers, despite all the difficulties faced, you have come to pray for this year. In the book of Ecclesiastes, there is a very deep discernment of time, there is a time for everything, a time to be born, and a time to die, a time to sow and a time to reap, a time to mourn and a time to laugh, a time to love and a time to hate, a time to destroy and a time to build, during times of war and peace. How very important it is to know when to do something in its own time. Humanity needs to comprehend the relevance of time. Humanity is limited in its comprehension of the infinite referring to the four seasons, the rotations of the moon and the sun, leading to the creation and conception of the hour, the minute, the second. All this is the result of human design in an attempt to contain the infinity of time within boundaries." Archbishop explained with examples of how man has been able to maintain a balance of time.

He continued his profound message, "a person's life, talents and gifts are a gift from God. Therefore, on what day do you stop using those gifts? Upon reflection of time, we see it slip away, and if we have not used those gifts granted us for our benefit and those around us, through God's eyes, we have wasted time.

The new year is a time to think about where we are headed as an individual, as a community and as a church. Firstly, we need to know where we are in order to decide where to go. And if we know where we are going, we need to plan to achieve our goal.



The poet Tekeyan says "*What is left of my life, strangely, only what I give to others, is left*". This is the principle of Christian living. It is true that by giving, something is removed from us, but something else is added. What is mental joy and satisfaction, something that no one can take away from us. But to live this joy, it is necessary for a person to have a noble consciousness of making others happy."

Referring to the importance of spreading joy, the Archbishop continued, "Yesterday we all rejoiced in different ways, welcoming in the new year. This is natural. However, did we think for a moment about those who do not have that fundamental experience of joy? They do not have a Christmas tree. They have no food to put on the table. Did we think about our brothers and sisters in

Lebanon, Syria, Artsakh, Armenia, or anywhere else around the world? Did we think of bringing a joyful tear in


their eyes with our small gift? To give and to give others joy, are the primary and foundational principles in Christianity.” Archbishop reflected on the meaning of happiness, “happiness is not determined by monetary wealth, or millions of dollars. Important things in life are generally free. We don’t need money to say hello, to share a smile, to show respect, to love; but with these exchanges, we make others happy, and in turn, ourselves.” “It is a new year, our hope is in God, we ask for His wisdom, to use time well and justly, and to achieve peace. For the eventual acknowledgement that peace is better than war.” He gave examples in history of the state of the world at the end of World War I. The heads of governments opted against war, but that same generation entered into a war 20 years later with greater destruction, more massive killings. In the end, the United Nations and other organisations were created to monitor peace. However, today the Ukrainian war may lead to World War III...” does humanity wish to wake up?” If the answer is yes, we must possess Christ’s love, to comprehend that we are a child of light, the illuminator of the dark and the hope of the continuation of light. For 2000 years, we have been the warriors of light, we believe in God, and the victory of Light, which can be achieved by our united efforts,” continued Archbishop Najarian.

“I wish you all good health. I personally wish peace to your souls; you need to have peace in order to share it with others. Share that peace to your brothers and sisters in Syria, Lebanon and Artsakh who live in unenviable conditions. Give to those who are in need in the four corners of the world. Let us come together before the altar of God and give to achieve our common goals. Let us take courage to work together, let us not make the mistakes of the past. May the new year be a blessing to all of us,” concluded the Archbishop.

Monday 2 January - The Primate presided over the second sitting of Joint Community Leaders. The purpose of the meetings is to implement assistance to Artsakh. Decisions were drawn and a sub-committee formed to speed up the activities.

Thursday 5 January – Christmas Eve Holy Mass was celebrated in the three parishes in Sydney and in Melbourne. The Primate celebrated Holy Mass in Holy Trinity at Wentworthville with Reverend Father Miuron Avedisian assisting. Details can be read in Parish News. Archpriest Reverend Father Bartev Karakashian celebrated Holy Mass and delivered the day’s relevant sermon in Holy Resurrection Church and Reverend Father Khacher Harutyunyan celebrated Holy Mass and delivered the day’s relevant sermon in St Mary’s Church in Melbourne.

Thursday 5 January – At the invitation of the Executive Director of Armenia Media Mrs Nora Sevagian with the various community leaders present, Archbishop Najarian delivered his Christmas message to the Australian Armenian community, on the Armenia radio Christmas program. As it has for decades, the *Voice of Armenia* radio program broadcasts the six-hour long program from 7.00pm Christmas Eve until 1.00am the next morning. Representatives of Armenian community organisations had the opportunity to express their best wishes to the community. With the assistance of her colleagues, Mrs Sevagian conducted an outstanding program, concluding with the Armenian Relief Society choir singing “*Khorhurt Meds*”, “*Aysor Donn e Sourp Dzuntyan*” and other spiritual and Armenian songs. The ARS members visited the homes of Armenian families on Christmas Eve to share the gospel of the Holy Birth of Christ, a traditional feature that has been passed down from one generation to the next.



In his optimistic message, the Archbishop said, “*Dear Australian Armenian community, I am glad that this opportunity has been given to me to reach you through the Voice of Armenia. I wish the best to our community, may God grant each of you good health, happiness, and unity in the community. We have had a rather difficult year, especially in Armenia, Artsakh and the Middle East. It is my wish that we are united to fight. We know that*

it is WE who must solve our problems. We know that every time we turn to others to solve our issues, that “other” will have to think about their interests first. Armenian people, particularly in Armenia and Artsakh, they themselves need to decide what their interests are and how they will achieve them.

The most important thing for us is the continuation of the independence of Armenia and Artsakh. This continuity should be the red line, because if we lose Artsakh today, believe me, tomorrow Syunik will fall and after that, the existence of Armenia will be questioned. We need wise leaders, who will have the foresight into the difficulties, and the decisions necessary to secure the independence of our countries.”

Archbishop Najarian gave two examples from history from which independence and security were secured with wise diplomacy. Forefather Theodore Rshtuni, was the first to abandon the Byzantine Empire, accepted the truce, and forged an agreement with the Moslem Arab Mu’awiya, securing his internal autonomy. Thanks to him, Armenia enjoyed independence and security for 100 years.

Another example is in Cilicia. King Hetum had the wisdom to go to Mongolia to form an alliance. The Mongols were pagans. That alliance had an important role, ensuring the kingdom’s continuity for 100 years.

We must have the capacity to select powers that understand us, but they will definitely understand when we demonstrate unity. That was the reason the Mu’awiya and the Mongols signed an acceptable alliance. In today’s Armenia, we need to have such a diplomatic approach, not only to withstand today’s struggle, but to see ahead, recognise the powers which may be supportive of Armenia’s independence. This is the primary issue. We all know that our existence in the diaspora is temporary. This temporary existence should be the driving force for both Armenia and Artsakh to continue their independence. This will be our last contribution to the eternal course of the Armenian people.

I hold a positive view, contrary to the fact that our two free countries are facing pressures; Armenia will keep independence with the support of outside forces and Armenia and Artsakh will retain their secure futures.

On the international front, the Artsakh issue is under investigation by the United Nations Security Council and the European Union. I believe that Artsakh will maintain its existence. With positive hope, I will rely on God as well, and particularly, I will rely on the discernment of the Armenian people. They will find the strength to unite, to fight, so that together, we can pursue our just causes.

Happy New Year and Christmas.”



Friday 6 January - Despite the inclement weather, a large crowd of faithful gathered for Holy Mass in the Diocese setting’s Holy Resurrection Church, Chatswood. Archbishop Najarian was the celebrant and homilist delivering the day’s stirring sermon with Archpriest Father Bartevo Karakashian assisting. Following Holy Mass, the Archbishop conducted the Blessing of Water service. The Godfather of the Cross this year was Mr Kevork Kharadjian, the son of late Archdeacon Hovhannes Kharadjian. A large basin was donated by the Kharadjian family on this occasion, in memory of their beloved husband and father, Deacon Hovhannes Kharadjian. The Archbishop conducted a blessing of the basin, blessed the Kharadjian family and praised the

memory of the late Archdeacon. Following Holy Mass, led by the procession of the diaconate and choir, Archbishop was escorted into the Edgarian Hall where the blessing of residence was conducted with water, salt and bread and afterwards distributed amongst the congregation.



In his Christmas message, noting the following verse from the gospels: “And behold, the virgin will conceive and have a Son, who will be named Immanuel, that is, God is with us”. Archbishop referenced, that more than 500 years before Christ’s birth, Isaiah, and other prophets also, who prophesied that God’s presence would be manifested in the souls of man and Jesus was to be of humble birth in a manger. This child would bring peace, which was not common - but eternal, divine. Although people would not tolerate the newborn light, instead darken it, the Armenian people were to remain faithful to that light from the first day, contrary to the Golgothas faced. “Today, the same Golgotha, the same Genocide threatens us, and this is the circumstance in which we greet the New Year and Christmas. However, we are a miracle working nation when we are united. *Sardarabad* is evidence of that. The Armenian people are victorious in the face of all kinds of difficulties when they are united, because where there is unity, there is divine presence.” Archbishop referred to the threat of a third world war. He gave an interesting example: “A scientist was asked what will happen to the world following a third world war, to which the scientist responds, I don’t know what will occur after a third world war, but I do know that the fourth world war will take place with sticks and stones.”

Drawing a parallel, this illustrates Christ’s second coming, following the destruction of the world. Directing his attention to God, he asked the Most High, “with Christ’s love and faith in God, we have faced all kinds of difficulties and pressures for more than 1500 years; today, we will not give way to difficulties and pressures, Lord; but it is enough, Lord, we ask You, to remove the tears from our eyes. Although our bones ache, we will not depart from the faith and we know that You will come to our aid.”

Archbishop Najarian reminded the congregation that we have a huge work and responsibilities entrusted to us, from God, for the Homeland, Artsakh and our brothers and sisters in general. “Let us have the wisdom to live as faith-filled Armenians, by bringing our strengths together, let us become a united force that no battle can defeat. We place our arms on the ground, in wait with the need to hold that piece of land. WE SHALL NOT let it be said one day that a talented people lived here, and for such and such reasons, no longer exist today.”

Continuing, the Archbishop said, “Christmas is an opportunity to do good. It is by giving that a person feels richer, and no one can take that wealth away from him. We are God’s ambassadors, and it is by our WORKS that we will spread faith in God, the Christian faith, the religion of victory. We will not be ashamed to confess our faith and we will face the new year with a smile and determination,” he concluded.

The Primate traditionally welcomes the representatives of Armenian organisations to the Diocesan Centre every year to congratulate them on the new year and Christmas. Close to 60 representatives of all community organisations were received by the Archbishop in the Centre. Hosted by the Diocesan Ladies Guild, the guests included MP Mr Tim James, NSW Member for Willoughby, who gave a speech, congratulating the community on Armenian Christmas and conveyed his best regards. Representatives of the various organisations shared sentiments and their congratulations, thanked the Primate, and stressed their need for united work to aid the



homeland and Artsakh, anticipating the potential challenges. In turn, Archbishop Najarian expressed his appreciation and his optimism that together, we will successfully meet the needs of our community and the homeland. He emphasised the need for workers; that he, as the Primate, had the support of all the Armenian organisations, whether they be political parties or of various community programs and activities. “This door is open to all of you, I feel stronger in your presence. We serve as clerics, and will serve the nation, and you will too, in your various capacities. If there is death, it will be through that struggle, this is the Armenian spirit. In the past, our organisations worked together to defeat evil, and now you are their heirs. It is our turn to fight together so that future generations remember us and we serve as an example to them,” declared the Archbishop.



Saturday 7 January – Accompanied by Archpriests Reverend Father Norayr Patanian and Father Barte



service in the Armenian section of Macquarie Park Cemetery before the Genocide Memorial Monument. In his message, he commended the presence of the believers and advised not to be discouraged by unfavourable weather conditions, as especially on days such as this, we keep the memory of our loved ones alive and clear. “With our visits and burning incense, we continue their legacy.” With the participation of the parish priests, the Archbishop visited the graves of Archbishop Aghan Baliozian, Father Razmig Boghossian and Aramais Mirzaian of blessed memory, raising prayers and blessing their graves.

Blessed be the memory of the righteous.

Saturday 7 January – Archbishop Najarian was present at the Christmas Dinner held in the Edgarian Hall. The dinner was organised by the Holy Resurrection Church Ladies Auxiliary. He expressed his heartfelt sentiments, his thanks and gratitude to the Ladies Auxiliary and the Parish Council members.



Sunday 8 January – At the invitation of the Nor Serount Cultural Association, Archbishop Najarian, accompanied by Holy Resurrection Church Parish Chairman Mr Bedros and Mrs Ilda Zorlu, attended the New Year and Christmas celebration held in the Cedrus restaurant. The newly formed committee of the Association also invited the Mayor of Ryde, Councillor Sarkis and Mrs Maro Yedelian to this inaugural event. Also present were the recently elected Chairman of the Social Democratic Hunchakian Party (SDHP) Mr Sebouh Kalpakian, the NSCA committee and its Chairman Mr Vrej Kahkejian.

